ISSN 2956-5995

MUNETIK

Nr 2/2025(10)

ՄՈՒՆԵՏԻԿ

CZASOPISMO MNIEJSZOŚCI ORMIAŃSKIEJ

·Հայ-լեհական·հասարակական·հոգևոր·կրթամշակութային·վերլուծական·հանդես

POLSKA POWIEDZIAŁA PRAWDĘ

Dwudziestolecie uchwały Sejmu RP uznającej Ludobójstwo Ormian

1915-2005-2025

ԼԵՀԱՍՏԱՆԸ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լեհաստանի Հանրապետության Սեյմի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի քսանամյակը

1915-2005-2025

Հայ-լեհական հասարակական կոմիտե
Ormiańsko-Polski Komitet Społeczny

Fot. Wikipedia

POMNIK LUDOBÓJSTWA ORMIAN W KRAKOWIE
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԿՐԱԿՈՎՈՒՄ

Drodzy Czytelnicy,

Przekazujemy Wam do lektury 10. numer czasopisma „Munetik", który podsumowuje ważne wydarzenia kulturalne, naukowe, polityczne, społeczne i religijne, jakie miały miejsce w życiu mniejszości ormiańskiej w marcu, kwietniu i maju 2025 roku.

W bieżącym, wiosennym numerze w sposób szczególny chcemy skupić się na tegorocznej, 110. rocznicy Ludobójstwa Ormian. Dlatego polecamy Państwa uwadze artykuł Andrzeja Zięby pt. „Potomkowie i spadkobiercy: Ormianie w Polsce wobec ludobójstwa 1915 roku", w którym w sposób dość szczegółowy przedstawione zostały wszystkie wydarzenia z życia mniejszości ormiańskiej od okresu po Ludobójstwie aż po czasy współczesne, związane z ujawnieniem, upamiętnieniem oraz potępieniem tej ogólnoludzkiej tragedii i zbrodni.

W tym numerze publikujemy również tekst Grzegorza Pełczyńskiego pt. „Polscy pisarze o Ludobójstwie Ormian". Prezentuje on ciekawą analizę dzieł kilku polskich pisarzy i poetów, w których w czytelnej a zarazem artystycznej formie wybrzmiewają i zostają przedstawione opinii publicznej niezatarte wspomnienia o największej tragedii narodu ormiańskiego i pierwszym ludobójstwie XX wieku.

Dziękujemy naszym czytelnikom za ciepłe słowa i pozytywne opinie, które nas jeszcze bardziej zobowiązują, i mamy nadzieję, że w przyszłych wydaniach nadal będziemy poszerzać nasze grono odbiorców, pozostając oczekiwaną publikacją w życiu mniejszości ormiańskiej w Polsce.

Miłej lektury

HRACZJA BOJADŻJAN
Przewodniczący Rady Redakcyjnej

Սիրելի՛ ընթերցողներ,

Ձեր ընթերցանությանն ենք ներկայացնում «Մունետիկ» պարբերականի 10-րդ համարը, որն ամփոփում է 2025 թվականի մարտ, ապրիլ և մայիս ամիսներին Լեհահայոց կյանքում տեղի ունեցած նշանակալի մշակութային, գիտական, քաղաքական, հասարակական, կրոնական իրադարձությունները:

«Մունետիկ» պարբերականի այս համարում, որը 2025 թվականի գարնանային հրատարակությունն է և նվիրված է Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին, կարող եք կարդալ Անդժեյ Ժիեմբայի «Հետնորդներն ու ժառանգները. Լեհահայերի վերաբերմունքը 1915 թվականի ցեղասպանությանը» հոդվածը, որում բավականին հանգամանալից կերպով ներկայացված են Հայոց ցեղասպանությանը հաջորդող ժամանակաշրջանից մինչ մեր օրերը Լեհահայ համայնքի կյանքում տեղ գտած այն բոլոր իրադարձությունները, որոնք նպաստել են այդ համամարդկային ողբերգության և ոճիրի վերհանմանը, հիշատակմանն ու դատապարտմանը: Բավականին հետաքրքիր վերլուծությամբ հեղինակը անդրադառնում է նաև տարբեր ժամանակներում Լեհաստանում բնակություն հաստատած հայերի համընդհանուր ընկալմանը ազգային ճակատագրի մի շարք տխուր էջերի վերաբերյալ և լեհ ազգի կողմից տրված ազնիվ աջակցությանն ու ապրումակցմանը:

Այս համարում տեղ է գտել նաև Գժեգոժ Պելչինսկու «Լեհ գրողները Հայոց ցեղասպանության մասին» հոդվածը, որում բավականին հետաքրքիր վերլուծությամբ ներկայացված են մի շարք լեհ գրողների այն ստեղծագործությունները, որոնցում անթաքույց կերպով և գեղարվեստական ոճով բարձրաձայնվում և հանրությանն են մատուցվում հայ ազգի ամենամեծ ողբերգության և 20-րդ դարի առաջին ցեղասպանության անջնջելի հիշողությունները:

Շնորհակալ ենք մեր ընթերցողներին՝ մեզ ուղղված ջերմ խոսքերի և դրական կարծիքների համար, որոնք մեզ առավել պարտավորեցնող են և լիահույս ենք, որ առաջիկա հրատարակություններով կշարունակենք ընդլայնել մեր լսարանը և սպասված հրատարակություն լինել Լեհահայոց համայնքի կյանքում:

Բարի ընթերցանություն:

ՀՐԱՉՅԱ ԲՈՅԱՋՅԱՆ
Խմբագրական խորհրդի նախագահ

SPIS TREŚCI

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Nr 2/2025(10)

01 **Redakcja**
Słowo od Redakcji
Խմբագրություն
Խմբագրական խոսք ընթերցողին

03 **Wiadomości (marzec-kwiecień-maj)**
Polityczne, społeczne, kulturalne, edukacyjne
Անցուդարձ (մարտ-ապրիլ-մայիս)
Քաղաքական, հասարակական, մշակութային, կրթական

20 **ANDRZEJ A. ZIĘBA**
Potomkowie i spadkobiercy: Ormianie w Polsce wobec ludobójstwa 1915 roku
ԱՆԴՐԵՅ ԺԻԵՄԲԱ
Հետնորդներն ու ժառանգները. Լեհահայերի վերաբերմունքը 1915 թվականի ցեղասպանությանը

32 **GRZEGORZ PEŁCZYŃSKI**
Polscy pisarze o ludobójstwie Ormian
ԳԺԵԳՈԺ ՊԵԼՉԻՆՍԿԻ
Լեհ գրողները Հայոց ցեղասպանության մասին

Fot. KlubKulturyOrmiańskiej.Fb

Spotkanie Ormianek z Wrocławia z okazji Dnia Kobiet

■ Mieszkające we Wrocławiu Ormianki spotkały się 8 marca przy wspólnym stole, by w serdecznej atmosferze uczcić Dzień Kobiet. Wydarzenie stało się okazją do rozmów, wzajemnych życzeń oraz podkreślenia znaczenia kobiecej obecności i zaangażowania w życiu mniejszości.

Ormiański Dzień Kobiet w Muzeum Niepodległości

■ W warszawskim Muzeum Niepodległości odbyły się 8 marca obchody ormiańskiego Dnia Kobiet, zrealizowane we współpracy z Fundacją Armenian Foundation.

W programie znalazł się występ dzieci i młodzieży uczęszczających na zajęcia ormiańskiej tradycji i kultury. Zaprezentowano tańce, pieśni i poezję nawiązujące do roli kobiet w przekazywaniu dziedzictwa kulturowego. Spotkanie miało charakter otwarty.

Parlament Europejski żąda uwolnienia ormiańskich jeńców

■ Parlament Europejski przyjął 12 marca rezolucję, w której jednoznacznie potępia działania Azerbejdżanu wobec ormiańskich jeńców wojennych i ludności cywilnej. W dokumencie znalazł się apel o natychmiastowe uwolnienie wszystkich Ormian bezprawnie przetrzymywanych w azerskich więzieniach oraz wezwanie do sankcji wobec osób odpowiedzialnych za łamanie praw człowieka.

Rezolucję poparło 523 europosłów, 3 było przeciw, a 84 wstrzymało się od głosu. Żaden polski eurodeputowany nie zagłosował przeciw.

Wśród polskich europosłów za przyjęciem rezolucji głosowali m.in.:

z Koalicji Obywatelskiej – Magdalena Adamowicz, Bartosz Arłukowicz, Krzysztof Brejza, Borys Budka, Kamila Gasiuk-Pihowicz, Dariusz Joński, Janusz Lewandowski, Elżbieta Łukacijewska, Jagna Marczułajtis-Walczak,

Վրոցլավաբնակ հայուհիների հանդիպումը Կանանց տոնի առթիվ

■ Մարտի 8-ին Վրոցլավում բնակվող հայուհիները մեկտեղվեցին տոնական սեղանի շուրջ՝ ջերմ մթնոլորտում նշելու Կանանց տոնը: Միջոցառումը դարձավ շփման, փոխադարձ բարեմաղթանքների և համայնքային կյանքում կանանց մասնակցության ու նշանակության ընդգծման հիանալի առիթ:

Կանանց տոնը Անկախության Թանգարանում

Fot. Muzeum Niepodległosci.Fb

■ Մարտի 8-ին Վարշավայի Անկախության թանգարանում նշվեց Կանանց տոնը՝ կազմակերպված Հայկական Հիմնադրամի համագործակցությամբ:

Ծրագրում ընդգրկված էր երեխաների և երիտասարդների ելույթներ, ովքեր մասնակցում էին հայկական մշակույթի և ավանդույթների դասընթացներին: Ներկայացվեցին պարեր, երգեր և պոեզիա, որոնք ընդգծում էին կանանց դերը մշակութային ժառանգության փոխանցման գործում: Միջոցառումը բաց էր բոլորի համար:

Եվրոպական խորհրդարանը պահանջում է ազատել հայ ռազմագերիներին

■ Մարտի 12-ին Եվրոպական խորհրդարանը ընդունեց բանաձև, որով միաձայն դատապարտեց

Iwona Nykiel, Bartłomiej Sienkiewicz, Michał Szczerba, Marta Wcisło, Bogdan Zdrojewski; z Nowej Lewicy – Robert Biedroń, Joanna Scheuring-Wielgus, Krzysztof Śmiszek;

z PSL i Polski 2050 – Adam Jarubas, Krzysztof Hetman;

z Konfederacji – Marcin Sypniewski, Stanisław Tyszka, Ewa Zajączkowska-Hernik;

oraz Joachim Brudziński z Prawa i Sprawiedliwości.

Część europosłów z PiS oraz Konfederacji wstrzymała się od głosu, w tym m.in. Beata Szydło, Patryk Jaki, Daniel Obajtek, Jadwiga Wiśniewska, Anna Zalewska, Adam Bielan, Tomasz Buczek i Anna Bryłka.

Według danych Parlamentu Europejskiego, od 2020 roku Azerbejdżan nie przestrzega porozumień międzynarodowych dotyczących wymiany jeńców i nadal przetrzymuje setki Ormian – zarówno żołnierzy, jak i osoby cywilne. Szczególne zaniepokojenie wywołały wydarzenia po ataku na Górski Karabach we wrześniu 2023 roku, które doprowadziły do masowego exodusu ludności ormiańskiej z tego regionu. Ci, którzy pozostali, zostali aresztowani i poddani procesom uznanym za pokazowe oraz sprzeczne z zasadami sprawiedliwości międzynarodowej.

Parlament Europejski zaapelował również o przeprowadzenie niezależnego śledztwa w sprawie przymusowych wysiedleń oraz tzw. czystek etnicznych. W rezolucji podkreślono, że dalsza współpraca Unii Europejskiej z Azerbejdżanem nie może odbywać się kosztem praw człowieka.

Fot. Gagik Parsamyan

„For You” – wystawa z okazji Dnia Kobiet

■ W siedzibie Związku Ormiańskiego w Gdańsku odbyła się 13 marca wystawa „For You”, zorganizowana z okazji Dnia Kobiet z inicjatywy prezesa Gagika Parsamiana. Wydarzenie zgromadziło liczne grono uczestników i stało się okazją do wspólnego świętowania.

Orzesze. Wizyta konsula honorowego Armenii i wicewojewody śląskiego

■ Burmistrz Orzesza, Mariusz Oleś gościł 17 marca Hraczję Bojadżjana, konsula honorowego Republiki Armenii oraz Michała Kopańskiego, wicewojewodę śląskiego.

Rozmowy miały charakter roboczo-kurtuazyjny i dotyԱդրբեջանի գործողությունները՝ ուղղված հայ ռազմագերիների և քաղաքացիական բնակչության դեմ: Փաստաթղթում հնչում է կոչ, որով պահանջվում է անհապաղ ազատ արձակել բոլոր հայերին, որոնք ապօրինի պահվում են ադրբեջանական բանտերում, ինչպես նաև կոչ՝ պատժամիջոցներ կիրառելու մարդու իրավունքների խախտման պատասխանատուների դեմ:

Բանաձևը ստացել է 523 պատգամավորի աջակցություն, 3-ը քվեարկել են դեմ, իսկ 84-ը՝ ձեռնպահ: Ոչ մի լեհ պատգամավոր չի քվեարկել դեմ:

Բանաձևին աջակցած լեհ պատգամավորներից են՝ Քաղաքացիական Կոալիցիայից՝ Մագդալենա Ադամովիչը, Բարտոշ Արլուկովիչը, Կշիշտոֆ Բրեյզան, Բորիս Բուդկան, Կամիլա Գասյուկ-Պիհովիչը, Դարիուշ Յոնսկին, Յանուշ Լևանդովսկին, Էլժբիետա Վուկաջիևսկան, Յագնա Մարչուլայտիս-Վալչակը, Իվոնա Նիկելը, Բարտուոմեյ Սիենկևիչը, Միխաել Շչերբան, Մարտա Վչիսլո, Բոգդան Զդրոյևսկի, Նոր Ձախից՝ Ռոբերտ Բիեդրոնը, Յոաննա Շյուրինգ-Վիելգուսը, Կշիշտոֆ Շմիշեկը, ՊՍԼ-ից և Լեհաստան 2050-ից՝ Ադամ Յարուբասը, Կշիշտոֆ Հեթմանը, Կոնֆեդերացիայից՝ Մարչին Սիպնևսկին, Ստանիսլավ Տիշկան, Եվա Զայոնչկովսկա-Հեռնիկը, ինչպես նաև «Իրավունք և Արդարություն» կուսակցությունից՝ Յոախիմ Բրուդժինսկին:

«Իրավունք և Արդարություն» և Կոնֆեդերացիայի մի շարք պատգամավորներ ձեռնպահ են մնացել, այդ թվում՝ Բեատա Շիդլոն, Պատրիկ Յակին, Դանիել Օբայտեկը, Յադվիգա Վիշնևսկան, Աննա Զալևսկան, Ադամ Բիելանը, Տոմաշ Բուչեկը և Աննա Բրյուլկան:

Եվրոպական խորհրդարանի տվյալներով՝ 2020 թվականից սկսած Ադրբեջանը չի պահպանում ռազմագերիների փոխանակման միջազգային պայմանավորվածությունները և շարունակում է պահել հարյուրավոր հայերի՝ զինվորների և քաղաքացիական անձանց: Մեծ անհանգստություն է առաջացրել 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի դեմ հարձակման հետևանքով տեղի ունեցած զանգվածային բռնի տեղահանությունը: Նրանք, ովքեր մնացել են, ձերբակալվել են և ենթարկվել կեղծ դատավարությունների, որոնք ճանաչվել են ցուցադրական և միջազգա-

Fot. Miasto Orzesze

czyły m.in. lokalnych inicjatyw kulturalnych i edukacyjnych oraz współpracy międzynarodowej.

Wieczór Poezji Ormiańskiej w Krakowie

■ Ormiańskie Towarzystwo Kulturalne, we współpracy z Ormiańską Organizacją Młodzieżową z Warszawy, zorganizowało w krakowskiej siedzibie Towarzystwa Wieczór Poezji Ormiańskiej poświęcony twórczości Parujra Sewaka – wybitnego ormiańskiego poety i intelektualisty.

Wydarzenie było związane ze stuleciem urodzin Parujra Sewaka (1924–1971), obchodzonym w ubiegłym roku. Jubileusz tej niezwykłej postaci został również upamiętniony w artykule opublikowanym w 8. numerze naszego czasopisma.

Wieczór przyciągnął liczne grono miłośników kultury i literatury ormiańskiej. Stał się okazją do poetyckiej refleksji, osobistych wzruszeń oraz międzypokoleniowej rozmowy. Wspólne czytanie wierszy i rozmowy o dziedzictwie odbywały się w atmosferze otwartości i serdeczności, nadając spotkaniu wyjątkowy, niezapomniany charakter.

To pierwsze wspólne przedsięwzięcie obu organizacji zapowiada dalszą, długofalową współpracę, której celem jest nie tylko promocja, ale i żywe pielęgnowanie dziedzictwa ormiańskiej kultury w Polsce.

Dewocyjny obrazek biskupa Ignacego Maloyana z okazji beatyfikacji w 2001 roku.
Սրբանկար արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանի՝ 2001 թ. երանելիների շարքին դասվելու առիթով

Ignacy Maloyan zostanie ogłoszony świętym

■ Papież Franciszek zatwierdził 28 marca dekret Dykasterii Spraw Kanonizacyjnych o kanonizacji błogosławionego Ignacego Maloyana – ormiańskokatolickiego arcyjին արդարադատության սկզբունքների խախտմամբ:

Խորհրդարանը նաև կոչ է արել իրականացնել անկախ հետաքննություն՝ հարկադիր տեղահանությունների և այսպես կոչված էթնիկ զտումների վերաբերյալ: Բանաձևում նշվել է, որ ԵՄ-ի հետագա համագործակցությունը Ադրբեջանի հետ չի կարող ընթանալ մարդու իրավունքների կոպտագույն խախտման հաշվին:

«For You» ցուցահանդեսը՝ նվիրված Կանանց տոնին

■ Գդանսկի Հայկական Միությունում մարտի 13-ին տեղի ունեցավ «For You» ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր Կանանց տոնի առթիվ՝ նախագահ Գագիկ Պարսամյանի նախաձեռնությամբ: Միջոցառումն ընթացավ մասնակիցների մեծ ընդգրկվածությամբ և դարձավ համատեղ տոնակատարության ջերմ առիթ:

Օժեշե. Հայաստանի պատվո հյուպատոսի և Սիլեզիայի փոխմարզպետի այցը

■ Օժեշեի քաղաքապետ Մարիուշ Օլեշը մարտի 17-ին հյուրընկալեց Հայաստանի Հանրապետության պատվո հյուպատոս Հրաչյա Բոյաջյանին և Սիլեզիայի փոխմարզպետ Միխայել Կոպանսկուն: Հանդիպումը գործնական և բարեկամական բնույթ էր կրում, որի ընթացքում քննարկվեցին տեղական մշակութային և կրթական նախաձեռնություններին առնչվող հարցեր, ինչպես նաև միջազգային համագործակցությանն աղերսվող հետագա հնարավորությունները:

Հայկական պոեզիայի երեկո Կրակովում

■ Կրակովի Հայ Մշակութային Ընկերակցությունը՝ համագործակցությամբ Վարշավայի Հայ Երիտասարդական Կազմակերպության հետ, Կրակովում կազմակերպեց Հայկական պոեզիայի երեկո՝ նվիրված Պարույր Սևակի՝ անվանի հայ բանաստեղծի և մտավորականի ստեղծագործություններին:

Միջոցառումը նվիրված էր Պարույր Սևակի ծննդյան 100-ամյակի (1924-1971) տոնակատարությունների հետ, որն անցկացվել էր նախորդ տարի: Այս մեծանուն գործչի հոբելյանը նշվել է նաև մեր հանդեսի 8-րդ համարում:

Երեկոն համախմբեց հայկական մշակույթի և գրա-

Fot. OTK

biskupa z Mardin, zamordowanego w 1915 roku podczas Ludobójstwa Ormian.

Maloyan został beatyfikowany przez Jana Pawła II w 2001 roku. Jego proces kanonizacyjny zakończył się oficjalnie po blisko ćwierćwieczu.

Ignacy Maloyan urodził się 19 kwietnia 1869 roku w Mardin, w katolickiej rodzinie ormiańskiej. Święcenia kapłańskie przyjął w 1896 roku, a imię Ignacy przyjął na cześć św. Ignacego z Antiochii.

Jako arcybiskup nie wyrzekł się wiary mimo aresztowania i tortur. Został rozstrzelany 10 czerwca 1915 roku. Dla wielu Ormian pozostaje symbolem wierności Kościołowi i pamięci o męczennikach XX wieku.

Fot. ŚUW

Spotkanie przedstawicieli mniejszości narodowych i etnicznych w Katowicach

■ W Sali Marmurowej Śląskiego Urzędu Wojewódzkiego w Katowicach odbyło się 26 marca spotkanie z przedstawicielami organizacji mniejszości narodowych i etnicznych, zorganizowane na zaproszenie wojewody śląskiego Marka Wójcika.

W spotkaniu wzięli udział: wicewojewoda Michał Kopański, Magdalena Szewczuk-Szturc – pełnomocnik ds. mniejszości narodowych i etnicznych, a także przedstawiciele organizacji reprezentujących mniejszości narodowe i etniczne z całego województwa śląskiego.

Szczególnym punktem programu było wystąpienie dr Katarzyny Kownackiej, nowo powołanej dyrektor Departamentu Wyznań Religijnych oraz Mniejszości Narodowych i Etnicznych MSWiA, która przedstawiła główne założenia polityki resortu na 2025 rok. Omówiła również zasady programów dotacyjnych i zachęciła organizacje do aktywnego uczestnictwa w naborach. Jej wystąpienie spotkało się z dużym zainteresowaniem ze strony uczestników.

Obecny był również Hraczja Bojadżjan, przedstawiciel mniejszości ormiańskiej i członek Komisji Wspólnej Rządu i Mniejszości Narodowych i Etnicznych. W krótkim wystąpieniu odniósł się do prac komisji prowadzonych w 2024 roku oraz bieżących spraw, ze szczególnym uwzględnieniem 20-lecia uchwalenia ustawy o mniejszościach narodowych i etnicznych. Wspomniał także o nadchodzących rocznicach ważnych dla mniejszości ormiańskiej w Polsce.

կանության բազմաթիվ սիրահարների: Այն դարձավ հարթակ՝ բանաստեղծական խորհուրդի, զգացմունքային ապրումների և սերունդների միջև անկեղծ երկխոսության համար: Ընդհանուր ընթերցումներն ու ժառանգության վերաբերյալ քննարկումները տեղի ունեցան ջերմ ու ընկերական մթնոլորտում՝ երեկոյին հաղորդելով առանձնահատուկ և անմոռանալի բնույթ:

Սա երկու հայկական կազմակերպությունների առաջին համատեղ նախաձեռնությունն էր, որը հիմք դրեց շարունակական համագործակցության՝ միավորելու ուժերը Լեհաստանում հայկական մշակութային ժառանգության պահպանման և զարգացման գործում:

Իգնատիոս Մալոյանը կսրբադասվի

■ Հռոմի Պապ Ֆրանցիսկոսը 2025 թվականի մարտի 28-ին հաստատեց Սրբադասման հարցերով գրասենյակի դեկրետը՝ սուրբ հռչակելու երանելի Իգնատիոս Մալոյանին՝ Մարդինի Հայ կաթողիկե արքեպիսկոպոսին, ով նահատակվել է 1915 թվականի Հայոց ցեղասպանության ընթացքում:

Իգնատիոս Մալոյանը երանելիների շարքին է դասվել Սուրբ Հովհաննես Պողոս Երկրորդ Պապի կողմից՝ 2001 թվականին, իսկ սրբադասման գործընթացը պաշտոնապես ավարտվել է գրեթե քառորդ դար անց:

Նա ծնվել է 1869 թվականի ապրիլի 19-ին Մարդին քաղաքում՝ հայ կաթոլիկ ընտանիքում: Քահանայական ձեռնադրությունը ստացել է 1896 թվականին և ի պատիվ Սուրբ Իգնատիոս Անտիոքացու՝ ընդունել է Իգնատիոս անունը:

Որպես արքեպիսկոպոս՝ նա չուրացավ իր հավատքը՝ չնայած ձերբակալությանը և խոշտանգումներին: Նա գնդակահարվեց 1915 թվականի հունիսի 10-ին: Նա դարձավ 20-րդ դարի նահատակության խորհրդանիշ՝ Եկեղեցու հանդեպ իր ցուցաբերած հավատարմության շնորհիվ:

Ազգային և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հանդիպումը Կատովիցեում

■ Սիլեզիայի մարզպետարանի՝ Կատովիցեի Մարմարե սրահում, 2025 թվականի մարտի 26-ին տեղի ունեցավ ազգային և էթնիկ փոքրամասնությունների կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպում, որը նախաձեռնել էր մարզպետ Մարեկ Վույչիկը: Հանդիպմանը մասնակցեցին փոխմարզպետ Միխայել Կոպանսկին, Մագդալենա Շևչուկ-Շտուրցը՝ ազգային և էթնիկ փոքրամասնությունների հարցերով լիազորը, ինչպես նաև Սիլեզիայի ամբողջ մարզից ժամանած տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման յուրահատուկ դրվագներից էր դոկտոր Կատարժինա Կովնացկայի ելույթը, որը վերջերս է նշանակվել Ներքին գործերի և վարչական հարցերի նախարարության կրոնական հարցերի և փոքրամասնությունների վարչության ղեկավար: Նա ներկայացրեց 2025 թվականի քաղաքականության հիմնական ուղղությունները, ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և խրախուսեց կազմակերպություններին ակտիվ մասնակցել դրամաշնորհային հայտերում:

Spotkanie miało charakter konsultacyjno-informacyjny i przebiegło w atmosferze otwartości oraz wzajemnego szacunku. Uczestnicy podkreślili znaczenie kontynuowania dialogu między mniejszościami a instytucjami publicznymi.

Zwartnoc ponownie w centrum uwagi archeologów z Polski

■ Centrum Archeologii Śródziemnomorskiej Uniwersytetu Warszawskiego rozpoczyna nową fazę badań archeologicznych w Armenii. W dniu 29 marca, przy ruinach katedry w Zwartnoc, podpisano umowę o współpracy pomiędzy CAŚ UW a ormiańską Służbą Ochrony Środowiska Historycznego i Muzeów-Rezerwatów Kulturowych. Porozumienie zawarli prof. Artur Obłuski oraz Armen Howhannisjan.

W projekcie bierze również udział Uniwersytet w Hamburgu, reprezentowany podczas uroczystości przez dr Nicolę Babucica. Planowane badania będą miały charakter interdyscyplinarny i rozpoczną się jeszcze tej wiosny.

Stanowisko archeologiczne w Zwartnoc, położone około 15 kilometrów na zachód od Erywania, obejmuje ruiny katedry z VII wieku, uznawanej za jedno z najważniejszych dzieł wczesnochrześcijańskiej architektury w regionie. Świątynia została zbudowana za rządów katolikosa Nersesa III i zniszczona przez trzęsienie ziemi w X wieku. Na terenie kompleksu znajdują się także pozostałości pałacu katolikosa, łaźni z systemem ogrzewania podłogowego oraz tłocznia win.

Fot. MKRA

Badania archeologiczne w Zwartnoc prowadzono już pod koniec XIX wieku. W 1893 roku rozpoczęto pierwsze znane prace terenowe z inicjatywy duchowieństwa ormiańskiego. Systematyczne wykopaliska kontynuowano w latach 1900–1907, a ostatni większy projekt archeologiczny przeprowadzono w 1958 roku.

Zgodnie z przekazami to właśnie w Zwartnoc miało dojść do spotkania św. Grzegorza Oświeciciela z królem Tirydatesem III – wydarzenia uznawanego za symboliczny początek chrystianizacji Armenii.

W 2000 roku kompleks w Zwartnoc został wpisany na Listę Światowego Dziedzictwa UNESCO jako część wpisu „Katedra i Kościoły w Eczmiadzynie oraz Stanowisko Archeologiczne Zwartnoc".

Ներկա էր նաև Հրաչյա Բոյաջյանը՝ հայ ազգային փոքրամասնության ներկայացուցիչը Լեհաստանի Կառավարության ու Ազգային և Էթնիկ փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում: Իր կարճ ելույթում նա անդրադարձավ հանձնաժողովի 2024 թվականի գործունեությանը և ընթացիկ հարցերին՝ հատկապես ընդգծելով «Ազգային և էթնիկ փոքրամասնությունների մասին» օրենքի ընդունման 20-ամյակը: Նա հիշեց նաև մի շարք առաջիկա տարեդարձերի մասին, որոնք կարևոր են Լեհաստանի հայ համայնքի համար:

Հանդիպումը կրեց խորհրդատվական և տեղեկատվական բնույթ, անցավ թափանցիկության և փոխադարձ հարգանքի մթնոլորտում: Մասնակիցները կարևորեցին փոքրամասնությունների և պետական կառույցների միջև շարունակական երկխոսության անհրաժեշտությունը:

Զվարթնոցը կրկին լեհ հնագետների ուշադրության կենտրոնում

■ Վարշավայի համալսարանի Միջերկրածովյան հնագիտության կենտրոնը սկսում է հնագիտական ուսումնասիրությունների նոր փուլ Հայաստանում: Մարտի 29-ին Զվարթնոցի տաճարի ավերակների տարածքում ստորագրվեց համագործակցության համաձայնագիր՝ կենտրոնի և Հայաստանի պատմամշակութային միջավայրի պահպանության ու թանգարան-արգելոցների ծառայության միջև: Փաստաթուղթը ստորագրեցին պրոֆեսոր Արթուր Օբլուսկին և Արմեն Հովհաննիսյանը: Նախագծին մասնակցում է նաև Համբուրգի համալսարանը, որը ներկայացնում էր դոկտոր Նիկոլա Բաբուչիչովը: Նախատեսվում է, որ միջառարկայական բնույթի հետազոտությունները կմեկնարկեն արդեն այս գարնանը:

Զվարթնոցի հնավայրը, որը գտնվում է Երևանից դեպի արևմուտք շուրջ 15 կմ հեռավորության վրա, ներառում է 7-րդ դարի տաճարի ավերակները, որոնք համարվում են վաղ քրիստոնեական ճարտարապետության նշանակալից օրինակներից մեկը: Տաճարը կառուցվել է Ներսես Գ. Տայեցի կաթողիկոսի օրոք և ավերվել է 10-րդ դարի երկրաշարժի հետևանքով: Համալիրի տարածքում պահպանվել են նաև կաթողիկոսի պալատի, հատակաջեռուցմամբ բաղնիքի և գինու պատրաստման սրահի մնացորդները: Զվարթնոցում հնագիտական ուսումնասիրությունները սկսվել են 19-րդ դարի վերջին: Առաջին դաշտային աշխատանքները կատարվել են 1893 թվականին՝ հայ հոգևորականության նախաձեռնությամբ: Հետազոտությունները շարունակվել են 1900-1907 թվականներին, իսկ վերջին խոշոր նախագիծը իրականացվել է 1958 թվականին:

Ըստ ավանդության՝ հենց Զվարթնոցում է տեղի ունեցել Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Սուրբ Տրդատ Գ. թագավորի հանդիպումը՝ իրադարձություն, որը համարվում է Հայաստանի քրիստոնեացման խորհրդանշական սկիզբը:

2000 թվականին Զվարթնոցի համալիրը ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում՝ որպես «Էջմիածնի տաճարներն ու Զվարթնոցի հնավայր» գրանցման մաս:

Fot. OPKS

Polska pamięta. Obchody 110. rocznicy Ludobójstwa Ormian i dwudziestej rocznicy uchwały Sejmu Rzeczypospolitej Polskiej

■ W dniach od 23 do 25 kwietnia w Warszawie, Krakowie oraz w innych miastach Polski odbyły się uroczystości poświęcone upamiętnieniu 110. rocznicy Ludobójstwa Ormian, dokonanego na początku XX wieku na terenie Imperium Osmańskiego. Tegoroczne obchody miały szczególny charakter, ponieważ zbiegły się z dwudziestą rocznicą uchwały Sejmu Rzeczypospolitej Polskiej z 2005 roku, w której polski parlament oficjalnie uznał wydarzenia z 1915 roku za ludobójstwo.

23 kwietnia – otwarcie obchodów

■ Obchody w Polsce rozpoczął koncert w ewangelicko-augsburskim kościele Świętej Trójcy w Warszawie. Stanowił on pierwszą odsłonę tegorocznej IV edycji Festiwalu Kultury Ormiańskiej i dedykowany był pamięci ofiar Ludobójstwa Ormian oraz dwudziestej rocznicy uchwały Sejmu Rzeczypospolitej Polskiej, uznającej zbrodnię z 1915 roku za ludobójstwo. Wydarzenie, zorganizowane przez Ormiańsko-Polski Komitet Społeczny, zgromadziło licznych uczestników – przedstawicieli władz państwowych, Kościołów, korpusu dyplomatycznego, środowisk naukowych, instytucji kultury oraz społeczności ormiańskiej z całej Polski.

Wieczór otworzył Hraczja Bojadżjan, przedstawiciel mniejszości ormiańskiej w Polsce i prezes Ormiańsko-Polskiego Komitetu Społecznego. W swoim przemówieniu nawiązał do przypadającej w tym roku 20. rocznicy uchwały Sejmu RP uznającej Ludobójstwo Ormian za zbrodnię przeciwko ludzkości. Jak podkreślił: „Fakt, że dwadzieścia lat temu została ona dostrzeżona i uhonorowana przez polski parlament, świadczy o wielkiej dojrzałości, odwadze i wrażliwości na prawdę historyczną. Cześć i chwała tym, którzy wówczas stanęli po stronie godności i sprawiedliwości.”

W programie koncertu znalazły się utwory św. Mesropa Masztoca, Komitasa, Sajat-Nowy, Arno Babadżaniana, Henryka Mikołaja Góreckiego i Grigora Arakeliana – muzyka niosąca głębokie przesłanie duchowe i histo-

Լեհաստանը հիշում է. Հայոց ցեղասպանության 110-ամյակի և Լեհաստանի Հանրապետության Սեյմի որոշման 20-ամյակի հիշատակումները

■ 2025 թվականի ապրիլի 23-ից 25-ը Վարշավայում, Կրակովում և Լեհաստանի այլ քաղաքներում անցկացվեցին միջոցառումներ՝ նվիրված 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության տարածքում իրագործված Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցի հիշատակին: Այս տարվա հիշատակումներն առանձնահատուկ բնույթ ունեին, քանի որ համընկան նաև Լեհաստանի Հանրապետության Սեյմի կողմից 2005 թվականին ընդունված որոշման 20-ամյակի հետ, որով լեհական խորհրդարանը պաշտոնապես ճանաչեց 1915 թվականի իրադարձությունները որպես ցեղասպանություն:

Ապրիլի 23 Միջոցառումների պաշտոնական մեկնարկը

■ Ոգեկոչման արարողությունների մեկնարկը տրվեց Վարշավայի Սուրբ Երրորդություն ավետարանական-լյութերական եկեղեցում տեղի ունեցած համերգով: Այն Հայ մշակույթի փառատոնի չորրորդ շրջանի առաջին մասն էր և նվիրված էր թե՛ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, և թե՛ Լեհաստանի Սեյմի որոշման 20-ամյակին: Միջոցառումը կազմակերպվել էր Հայ-լեհական հասարակական կոմիտեի կողմից և համախմբել էր բազմաթիվ մասնակիցների՝ պետական, եկեղեցական և դիվանագիտական շրջանակներից, գիտական ու մշակութային հաստատություններից, ինչպես նաև Լեհաստանի տարբեր համայնքներից ժամանած հայության:

Երեկոն մեկնարկեց Հրաչյա Բոյաջյանի՝ Լեհաստանում հայ փոքրամասնության ներկայացուցչի և Հայ-լեհական հասարակական կոմիտեի նախագահի խոսքով: Իր ելույթում նա անդրադարձավ Սեյմի որոշման 20-ամյակին՝ նշելով. **«Փաստը, որ այս իրադարձությունը քսան տարի առաջ ճանաչվեց և արժանացավ Լեհական խորհրդարանի հարգանքին, վկայում է մեծ հասունության, քաջության և պատմական ճշմարտության հանդեպ զգայունության մասին: Փառք ու պատիվ նրանց, ովքեր այն ժամանակ կանգնեցին արժանապատվության և արդարության կողքին»**:

Համերգային ծրագրում ներկայացվեցին Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Առնո Բաբաջանյանի, Հենրիկ Միկուլայ Գուրեցկու և Գրիգոր Առաքելյանի ստեղծագործությունները, որոնցով համադրվեց հոգևոր խորությունը պատմական հիշողության հետ: Ելույթ ունեցան Սիլեզիայի կամերային նվագախումբը, Ձաբժեի պատանեկան երգչախումբը «Resonans con tutti», դիրիժոր և կոմպոզիտոր Գրիգոր Առաքելյանը, դաշնակահար և համերգի վարող Պյոտր Օչկովսկին:

Պատվավոր հյուրերի թվում էին Հայաստանի Հան-

Fot. OPKS

ryczne. Wystąpili: Śląska Orkiestra Kameralna, Zabrzański Chór Młodzieżowy „Resonans con tutti”, dyrygent i kompozytor Grigor Arakelian oraz pianista i prowadzący koncert Piotr Oczkowski..

Wśród obecnych byli między innymi: Alexander Arzumanian, ambasador Republiki Armenii, ambasador Republiki Cypryjskiej, przedstawicielka Ambasady Francji, biskup Markos Howhannisjan, zwierzchnik Apostolskiego Kościoła Ormiańskiego w Polsce, prof. Andrzej Szeptycki, wiceminister nauki i szkolnictwa wyższego, parlamentarzyści Polsko-Armeńskiej Grupy Parlamentarnej, przedstawiciele Ministerstwa Spraw Wewnętrznych i Administracji oraz Departamentu Wyznań Religijnych i Mniejszości Narodowych, prezesi organizacji ormiańskich z całej Polski, naukowcy, duchowni oraz licznie przybyli mieszkańcy Warszawy.

Z okazji uroczystości specjalny list skierował do organizatorów i uczestników Marszałek Sejmu Rzeczypospolitej Polskiej, Szymon Hołownia. W swoim przesłaniu, oddając hołd pamięci ofiar i wyrażając solidarność z mniejszością ormiańską w Polsce, Marszałek podkreślił, iż: „Wydobycie z cienia tej tragedii, powiedzenie o niej całej prawdy jest naszym wielkim moralnym obowiązkiem.”

Msza w intencji ofiar ludobójstwa i 10. rocznicy kanonizacji Świętych Męczenników

■ Po zakończeniu warszawskiego koncertu pamięci 23 kwietnia, uczestnicy obchodów zgromadzili się w kaplicy Matki Bożej Częstochowskiej przy kościele Świętej Trójcy na Solcu na uroczystej liturgii odprawionej w obrządku Apostolskiego Kościoła Ormiańskiego.

Nabożeństwu przewodniczył biskup Markos Howhannisjan, zwierzchnik Apostolskiego Kościoła Ormiańskiego w Polsce. Liturgię celebrował ks. Minas Hachwerdian, duszpasterz Apostolskiego Kościoła Ormiańskiego w Polsce, na co dzień posługujący wspólnocie w różnych miastach kraju.

Msza została odprawiona w intencji ofiar Ludobójstwa Ormian oraz 10. rocznicy kanonizacji Świętych Męczenników z 1915 roku, dokonanej przez Ormiański Kościół Apostolski w 2015 roku – w setną rocznicę tragicznych wydarzeń, które pochłonęły życie półtora miliona niewinnych istnień.

Oprawę muzyczną liturgii zapewnił Chór Apostolskiego Kościoła Ormiańskiego w Warszawie.

Fot. AKO

րապետության դեսպան Ալեքսանդր Արզումանյանը, Կիպրոսի Հանրապետության դեսպանը, Ֆրանսիայի դեսպանության ներկայացուցիչը, Լեհաստանում Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդը Տեր Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը, պրոֆեսոր Անդժեյ Շեպտիցկին՝ գիտության և բարձրագույն կրթության փոխնախարարը, Լեհ-հայկական միջխորհրդարանական խմբի պատգամավորներ, Ներքին գործերի և վարչական հարցերի նախարարության, ինչպես նաև կրոնական և փոքրամասնությունների վարչության ներկայացուցիչներ, հայ համայնքի կազմակերպությունների ղեկավարներ, գիտնականներ, հոգևորականներ և բազմաթիվ քաղաքացիներ:

Միջոցառման առիթով հատուկ ուղերձ էր հղել Լեհաստանի Հանրապետության Սեյմի նախագահ Շիմոն Հոլովնյան: Իր խոսքում՝ հարգանքի տուրք մատուցելով զոհերի հիշատակին և իր համերաշխությունը հայտնելով Լեհաստանի հայ համայնքին, նա շեշտեց. **«Այս ողբերգության ստվերից դուրս բերելը և դրա մասին ամբողջ ճշմարտությունը խոսելը մեր մեծ բարոյական պարտքն է»**:

Սուրբ Պատարագ՝ նվիրված ցեղասպանության զոհերին և նահատակների սրբադասման 10-րդ տարելիցին

■ Ապրիլի 23-ին Վարշավայում կայացած հիշատակի համերգից հետո միջոցառման մասնակիցները հավաքվել էին Սոլեցում գտնվող Սուրբ Երրորդություն եկեղեցու Չենստոխովայի Սուրբ Կույս Մարիամի մատուռում՝ մասնակցելու Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգով մատուցված հանդիսավոր Սուրբ Պատարագին:

Պատարագը հանդիսապետում էր Լեհաստանում Հայ Առաքելական Եկեղեցու առաջնորդ Տեր Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը: Պատարագիչն էր Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հովիվ՝ Տեր Մինաս աբեղա Հախվերդյանը, որը մշտապես իր ծառայությունն է մատուցում տարբեր քաղաքներում բնակվող հայ համայնքներին:

Պատարագը նվիրված էր Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ինչպես նաև 1915 թվականի նահատակների սրբադասման 10-րդ տարելիցին, որը կատարվել էր Հայ Առաքելական Եկեղեցու կողմից 2015 թվականին՝ մեկուկես միլիոն անմեղ կյանք խլած ողբերգական իրադարձությունների 100-ամյակի առիթով:

Սուրբ Պատարագին մասնակցում էր Վարշավայի Հայ Առաքելական Եկեղեցու երգչախումբը:

«Հայոց ցեղասպանության հիշատակի օր» Գիտաժողով Վարշավայի համալսարանում

■ Ապրիլի 24-ի կեսօրին Վարշավայի համալսարանի Պատմության ֆակուլտետի Սյունազարդ դահլիճում տեղի ունեցավ «Հայոց ցեղասպանության հիշատակի օր» խորագրով գիտաժողով, որը կազմակերպվել էր Լեհաստանի Հայ երիտասարդության կազմակերպության և Մարդու իրավունքների ու հումանիտար ճգնաժամերի գիտական խմբակի կողմից՝ Վարշավայի համալսարա-

Konferencja „Armenian Genocide Remembrance Day” na Uniwersytecie Warszawskim

■ W dniu 24 kwietnia w godzinach popołudniowych, odbyła się konferencja naukowa pt. „Armenian Genocide Remembrance Day”, zorganizowana przez Organizację Młodzieży Ormiańskiej w Polsce oraz Koło Naukowe Praw Człowieka i Kryzysów Humanitarnych przy Wydziale Nauk Politycznych i Studiów Międzynarodowych Uniwersytetu Warszawskiego.

Wydarzenie, które miało miejsce w Sali Kolumnowej Wydziału Historii UW, zgromadziło studentów, młodych Ormian studiujących w Warszawie, badaczy, ekspertów prawa międzynarodowego oraz osoby zaangażowane w działania na rzecz pamięci historycznej.

Ceremonia przy chaczkarze na warszawskiej Sadybie

Fot. Ambasada RA

■ W południe 24 kwietnia, w symbolicznym miejscu pamięci mniejszości ormiańskiej – przy chaczkarze na Skwerze Ormiańskim na warszawskiej Sadybie, odbyła się oficjalna uroczystość upamiętniająca 110. rocznicę Ludobójstwa Ormian oraz 20-lecie uchwały Sejmu RP z 2005 roku, uznającej zbrodnię z 1915 roku za ludobójstwo.

Wydarzenie zgromadziło przedstawicieli korpusu dyplomatycznego, parlamentu, duchowieństwa, organizacji ormiańskich oraz licznych mieszkańców Warszawy.

Uroczystość rozpoczął Ambasador Republiki Armenii, Alexander Arzumanian, który w swoim wystąpieniu podkreślił znaczenie międzynarodowego uznania prawdy historycznej oraz potrzebę przeciwdziałania wszelkim formom przemocy.

Modlitwę w intencji ofiar poprowadzili: ks. Minas Hachwerdian, duszpasterz Apostolskiego Kościoła Ormiańskiego w Polsce, oraz ks. prof. Józef Naumowicz, duszpasterz obrządku ormiańskokatolickiego. Obecność duchownych obu tradycji ormiańskich była wyrazem jedności i wspólnej odpowiedzialności za przekazywanie pamięci.

Wieńce i kwiaty złożyli przedstawiciele władz oraz mniejszości ormiańskiej w Polsce. W imieniu Sejmu Rzeczypospolitej Polskiej hołd oddali posłowie: Lucjan Pietrzczyk, Radosław Fogiel, Alicja Łuczak oraz Kamil Wnuk. Senat RP reprezentował senator Piotr Masłowski.

նի Քաղաքական գիտությունների և միջազգային հետազոտությունների ֆակուլտետում:

Միջոցառումը համախմբել էր ուսանողների, Վարշավայում սովորող երիտասարդ հայերի, գիտնականների, միջազգային իրավունքի փորձագետների և պատմական հիշողության պահպանմամբ զբաղվող անձանց:

Վարշավայի Հայկական պուրակի խաչքարի մոտ անցկացված ոգեկոչման արարողությունը

■ Ապրիլի 24-ին, կեսօրից հետո, Վարշավայի Սադիբայի Հայկական պուրակում գտնվող խաչքարի մոտ տեղի ունեցավ պաշտոնական արարողություն՝ նվիրված Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին և Լեհաստանի Հանրապետության Սեյմի կողմից 2005 թվականին ընդունված՝ 1915 թվականի ոճրագործությունը ցեղասպանություն ճանաչող բանաձևի 20-րդ տարելիցին:

Միջոցառմանը մասնակցում էին դիվանագիտական կորպուսի, խորհրդարանի, հոգևորականության, հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Վարշավայի բազմաթիվ բնակիչներ:

Արարողությունը մեկնարկեց Հայաստանի Հանրապետության դեսպան Ալեքսանդր Արզումանյանի խոսքով, որն իր ելույթում ընդգծեց պատմական ճշմարտության միջազգային ճանաչման և բռնության բոլոր ձևերի դեմ պայքարի կարևորությունը:

Սրբադասված նահատակներին ուղղված Բարեխոսության կարգը կատարեցին Լեհաստանում Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հովիվ՝ Տեր Մինաս աբեղա Հախվերդյանը և Հայ Կաթողիկե Եկեղեցու հոգևոր հովիվ՝ պրոֆ. Յոզեֆ Նաումովիչը: Երկու հայկական եկեղեցական ավանդույթների հոգևորականների ներկայությունը խորհրդանշում էր միասնությունն ու համատեղ պատասխանատվությունը պատմական հիշողության պահպանման գործում:

Լեհաստանի պետական իշխանությունների և հայ համայնքի ներկայացուցիչները ծաղկեպսակներ զետեղեցին, իսկ Լեհաստանի Հանրապետության Սեյմի անունից հարգանքի տուրք մատուցեցին պատգամավորներ Լուցյան Պիետրչիկը, Ռադոսլավ Ֆոգելը, Ալիցյա Լուչակը և Կամիլ Վնուկը: Լեհաստանի Սենատը ներկայացնում էր սենատոր Պյոտր Մասլովսկին:

Ծաղկեպսակներ զետեղեցին նաև Դիանա Հովակիմյանը՝ Լեհաստանում Հայաստանի Հանրապետության սփյուռքի հարցերով հանձնակատարը, Հրաչյա Բոյաջյանը՝ Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս և Լեհաստանում հայ փոքրամասնության ներկայացուցիչը, ինչպես նաև Լեհաստանում գործող հայկական կազմակերպությունների նախագահներն ու առաջնորդները, բազմաթիվ հայեր և մայրաքաղաքի բնակիչներ:

Ապրիլի 25 Ցուցահանդես, Սուրբ Պատարագ, համերգ

■ Հիշատակումների վերջին օրը սկսվեց բացօթյա ցուցահանդեսի հանդիսավոր բացմամբ: Ցուցահանդեսը կրում էր «Հայերը-Բաքու-1905» խորագիրը և պատ-

Wieniec złożyli również: Diana Howakimian, Komisarz ds. Diaspory Republiki Armenii w Polsce, Hraczja Bojadżjan, Konsul Honorowy Republiki Armenii i przedstawiciel mniejszości ormiańskiej w Polsce, a także prezesi i liderzy organizacji ormiańskich w Polsce oraz licznie przybyli Ormianie i mieszkańcy stolicy.

25 kwietnia – wystawa, liturgia, koncert

■ Ostatni dzień obchodów rozpoczął się od uroczystego otwarcia plenerowej wystawy zatytułowanej „Ormianie – Baku – 1905", przygotowanej przez Fundację Kultury i Dziedzictwa Ormian Polskich. Ekspozycja, prezentowana przed kościołem oo. Dominikanów przy ul. Freta w Warszawie, poświęcona została tragicznym wydarzeniom poprzedzającym ludobójstwo: pogromom Ormian w Baku na początku XX wieku, które zapowiadały późniejszą, systematyczną eksterminację.

Wystawa przywoływała dramatyczne losy ofiar tamtego czasu, w tym historię Zofii i Stanisława Łukasiewiczów – polskich Ormian z Baku, których życie zostało naznaczone przemocą, ucieczką i utratą. Starannie dobrane fotografie, dokumenty i świadectwa stanowiły nie tylko źródło wiedzy, ale także apel o zachowanie pamięci o wydarzeniach, które poprzedziły zagładę z 1915 roku.

Na szczególne uznanie zasługuje praca Marii Ohanowicz-Tarasiuk, prezes Fundacji i kuratorki wystawy, której zaangażowanie i wrażliwość złożyły się na jej wyjątkowy charakter.

Po otwarciu wystawy odprawiona została msza święta w obrządku ormiańskokatolickim, celebrowana przez ks. prof. Józefa Naumowicza. Liturgia była sprawowana w intencji 1,5 miliona ofiar pierwszego ludobójstwa XX wieku. Zgromadzeni wierni modlili się za pokój, sprawiedliwość i wieczną pamięć o tych, których życie zostało brutalnie przerwane.

Zwieńczeniem dnia był koncert muzyki ormiańskiej, podczas którego wystąpiły trzy uznane artystki: sopranistka Hasmik Baghdasarian-Dolukhanjan, której śpiew towarzyszył także liturgii, skrzypaczka Kristine Harutiunjan oraz mistrzyni duduku Nelli Martirosjan. Koncertowi towarzyszyła deklamacja poezji w języku ormiańskim i polskim przygotowana przez Organizację Młodzieży Ormiańskiej. Teksty recytowali Susanna Garibian i Gor Dallakian.

րաստվել էր Լեհահայ մշակույթի և ժառանգության հիմնադրամի կողմից: Այն ներկայացվեց Վարշավայի Ֆրետա փողոցի Դոմինիկյան եկեղեցու առջև և նվիրված էր ցեղասպանությանը նախորդող ողբերգական իրադարձություններին՝ 20-րդ դարի սկզբին Բաքվում հայերի ջարդերին, որոնք նախանշեցին հետագա համակարգված բնաջնջումը:

Ցուցահանդեսում ներկայացվում էին այդ ժամանակների զոհերի դրամատիկ ճակատագրերը, այդ թվում՝ բաքվեցի լեհահայ Զոֆիա և Ստանիսուավ Լուկասևիչների պատմությունը, որոնց կյանքը նշմարվեց բռնությամբ, փախուստով և կորստով: Խնամքով ընտրված լուսանկարները, փաստաթղթերը և վկայությունները ոչ միայն գիտելիքի աղբյուր էին, այլև կոչ՝ պահպանելու հիշողությունը 1915 թվականի կոտորածից առաջ տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Հատուկ գնահատանքի է արժանի ցուցահանդեսի համադրող և հիմնադրամի նախագահ Մարիա Օհանովիչ-Տարասիուկի կատարած աշխատանքը, որի նվիրումը և պատրաստակամությունը ցուցահանդեսին հաղորդեցին բացառիկ բնույթ:

Ցուցահանդեսի բացումից հետո մատուցվեց Սուրբ Պատարագ՝ Հայ Կաթողիկե Եկեղեցու ծիսակարգով, որը կատարեց պրոֆ. հայր Յոզեֆ Նաումովիչը: Սրբազան արարողությունը նվիրված էր 20-րդ դարի առաջին ցեղասպանության մեկուկես միլիոն զոհերի հիշատակին: Հավաքված հավատացյալները աղոթում էին խաղաղության, արդարության և նրանց հավերժ հիշատակի համար, որոնց կյանքը դաժանաբար ընդհատվել էր:

Օրը եզրափակվեց հայկական երաժշտության համերգով, որի ընթացքում ելույթ ունեցան երեք ճանաչված արտիստուհիներ՝ սոպրանո Հասմիկ Բաղդասարյան-Դոլուխանյանը, որի երգը ուղեկցել էր նաև Սուրբ Պատարագը, ջութակահարուհի Քրիստինե Հարությունյանը և դուդուկի վարպետ Նելլի Մարտիրոսյանը: Համերգն ուղեկցվում էր հայերեն և լեհերեն բանաստեղծությունների արտասանությամբ, որը կազմակերպվել էր Հայ երիտասարդության կազմակերպության կողմից: Բանաստեղծություններն ընթերցում էին Սուսաննա Ղարիբյանը և Գոռ Դալլաքյանը:

Fot. FKiDOP

Fot. Ambasada RA

Wizyta Ambasadora Armenii w Kielcach w ramach Ormiańsko-Polskich Dni Kultury i Sztuki

■ W dniu 29 kwietnia Kielce odwiedził ambasador Republiki Armenii w Polsce, Alexander Arzumanian. Wizyta odbyła się w ramach Ormiańsko-Polskich Dni Kultury i Sztuki, organizowanych w kieleckich szkołach artystycznych. Ambasador uczestniczył w wydarzeniu zorganizo-wanym w Państwowym Liceum Sztuk Plastycznych im. Józefa Szermentowskiego, gdzie zaprezentowano wspólne prace uczniów tej szkoły oraz studentów Państwowego Kolegium Sztuk Pięknych im. Panosa Terlemezjana z Erywania. Pokaz był elementem programu międzynarodowej wymiany artystycznej.

Z liceum od blisko 10 lat współpracuje Fundacja Polsko-Ormiańska, która przez lata wspierała kontakty ze szkołą w Erywaniu oraz inicjatywy służące wymianie kulturalnej i edukacyjnej młodzieży.

W trakcie pobytu w Kielcach ambasador spotkał się z wicewojewodą świętokrzyskim Michałem Skotnickim oraz prezydentką miasta Agatą Wojdą. Rozmowy dotyczyły współpracy samorządowej oraz możliwości realizacji wspólnych projektów w dziedzinie kultury, edukacji i działań społecznych.

Ambasadorowi towarzyszyły Komisarz ds. Diaspory Republiki Armenii w Polsce, Diana Howakimian, oraz radca ambasady, Meri Cherkezjan.

Fot. Ambasada RA

Հայաստանի դեսպանի այցը Կիելցե՝ Հայ-լեհական մշակույթի և արվեստի օրերի շրջանակներում

■ Ապրիլի 29-ին Կիելցե է այցելել Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Ալեքսանդր Արզումանյանը: Այցը տեղի է ունեցել Կիելցեի արվեստի դպրոցներում կազմակերպվող Հայ-լեհական մշակույթի և արվեստի օրերի շրջանակներում: Դեսպանը մասնակցել է Յուզեֆ Շերմենտովսկու անվան Գեղարվեստի պետական ուսումնարանում կազմակերպված միջոցառմանը, որտեղ ներկայացվել են այդ դպրոցի աշակերտների և Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի ուսանողների համատեղ աշխատանքները: Ցուցադրությունը միջազգային գեղարվեստական փառատոնի փորձի փոխանակման ծրագրի մի մասն էր: Ուսումնարանի հետ արդեն շուրջ 10 տարի համագործակցում է Լեհ-հայկական հիմնադրամը, որը տարիներ շարունակ աջակցել է Երևանի գեղարվեստի պետական քոլեջի հետ կապերին և երիտասարդների մշակութային ու կրթական փոխանակմանն ուղղված նախաձեռնություններին:

Կիելցեում գտնվելու ընթացքում դեսպանը հանդիպել է Սվիենտոկշիսկիե վոյևոդության փոխվոյևոդա Միխալ Սկոտնիցկու և քաղաքապետ Ագատա Վոյդայի հետ: Զրույցները վերաբերում էին ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությանը և մշակույթի, կրթության ու հասարակական գործունեության ոլորտներում համատեղ նախագծերի իրականացման հնարավորություններին:

Դեսպանին ուղեկցում էին Լեհաստանում Հայաստանի Հանրապետության սփյուռքի հարցերով հանձնակատար Դիանա Հովակիմյանը և դեսպանության խորհրդական Մերի Չերքեզյանը:

Premier Armenii z gratulacjami dla Prezesa Rady Ministrów RP

■ Premier Republiki Armenii Nikol Paszynian wystosował 3 maja list gratulacyjny do premiera Rzeczypospolitej Polskiej Donalda Tuska z okazji Święta Konstytucji – jednego z najważniejszych świąt państwowych w Polsce, upamiętniającego uchwalenie Konstytucji 3 maja 1791 roku.

„Serdecznie gratuluję Panu oraz przyjaznemu narodowi polskiemu z okazji święta narodowego Rzeczypospolitej Polskiej – Dnia Konstytucji" – napisał premier Armenii.

W przesłaniu podkreślił, że przyjaźń między narodami Armenii i Polski, oparta na więzach historycznych, stanowi trwały fundament rozwoju relacji dwustronnych. Z zadowoleniem odnotował, że współpraca armeńsko-polska rozwija się konsekwentnie, w oparciu o wspólne wartości demokratyczne i wzajemnie korzystne partnerstwo – zarówno na poziomie bilateralnym, jak i w ramach współpracy międzynarodowej.

Premier Paszynian wyraził również uznanie dla zaangażowania Polski jako współprzewodniczącego Partnerstwa Wschodniego w kontekście stosunków Armenii z Unią Europejską. Wyraził nadzieję na dalsze pogłębianie współpracy między oboma państwami dzięki wspólnym działaniom na rzecz dobra ich obywateli.

Na zakończenie złożył życzenia zdrowia i sukcesów Donaldowi Tuskowi oraz pomyślności i postępu narodowi polskiemu.

Ormiański piknik młodzieżowy w Warszawie

■ W Warszawie odbył się 3 maja ormiański piknik zorganizowany przez Organizację Młodzieży Ormiańskiej w Polsce. W wydarzeniu wzięła udział liczna grupa młodych Ormian oraz sympatyków kultury ormiańskiej.

Spotkanie miało charakter integracyjny i odbyło się w swobodnej, plenerowej atmosferze. Uczestnicy wspólnie grillowali, częstując się potrawami tradycyjnej kuchni ormiańskiej. Towarzyszyła temu muzyka, śpiew

Հայաստանի վարչապետի շնորհավորական ուղերձը Լեհաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահին

■ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը մայիսի 3-ին շնորհավորական ուղերձ է հղել Լեհաստանի Հանրապետության վարչապետ Դոնալդ Տուսկին՝ Սահմանադրության օրվա կապակցությամբ, որը Լեհաստանի կարևորագույն պետական տոներից է՝ նվիրված 1791 թվականի մայիսի 3-ի Սահմանադրության ընդունմանը: «Սրտանց շնորհավորում եմ Ձեզ և բարեկամ լեհ ժողովրդին Լեհաստանի Հանրապետության ազգային տոնի՝ Սահմանադրության օրվա առթիվ»,– գրել է Հայաստանի վարչապետը: Ուղերձում նա ընդգծել է, որ Հայաստանի և Լեհաստանի ժողովուրդների միջև բարեկամությունը, որը հիմնված

է պատմական կապերի վրա, հանդիսանում է երկկողմ հարաբերությունների զարգացման ամուր հիմք: Նա գոհունակությամբ նշել է, որ հայ-լեհական համագործակցությունը հետևողականորեն զարգանում է՝ հիմնված ընդհանուր ժողովրդավարական արժեքների և փոխշահավետ գործընկերության վրա՝ ինչպես երկկողմ մակարդակում, այնպես էլ միջազգային համագործակցության շրջանակներում: Վարչապետ Փաշինյանը նաև իր գնահատանքն է հայտնել Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների համատեքստում Արևելյան գործընկերության համանախագահող Լեհաստանի ներգրավվածության համար: Նա հույս է հայտնել, որ երկու պետությունների միջև համագործակցությունը կշարունակի խորանալ՝ շնորհիվ իրենց քաղաքացիների բարօրությանն ուղղված համատեղ ջանքերի: Ի վերջո, նա Դոնալդ Տուսկին մաղթել է առողջություն և հաջողություններ, իսկ լեհ ժողովրդին՝ բարգավաճում և առաջընթաց :

Հայկական երիտասարդական հավաքույթ Վարշավայում

■ Մայիսի 3-ին Վարշավայում տեղի է ունեցել հայկական հավաքույթ՝ կազմակերպված Լեհաստանի հայ երիտասարդության կազմակերպության կողմից: Միջոցառմանը մասնակցել է երիտասարդ հայերի և հայկական մշակույթի բարեկամների մեծ խումբ: Հանդիպումը

Fot. OMO

Fot. OMO

oraz spontaniczne tańce, które przyciągały uwagę przechodniów i tworzyły wyjątkowy klimat.

Piknik był okazją do budowania więzi wśród młodzieży i promowania dziedzictwa ormiańskiego w przestrzeni publicznej.

Premiera „Utworów wybranych" Howannesa Tumaniana w Krakowie

■ W sobotę, 17 maja w siedzibie Ormiańskiego Towarzystwa Kulturalnego przy ul. Studenckiej 2 w Krakowie odbyło się spotkanie poświęcone premierze tomu



Fot. OTK

կրում էր ինտեգրացիոն բնույթ և անցկացվեց ազատ, բացօթյա մթնոլորտում: Մասնակիցները միասին խորոված պատրաստեցին, ինչպես նաև համտեսեցին հայկական ավանդական խոհանոցի ուտեստներ: Այս ամենն ուղեկցվում էր երաժշտությամբ, երգով և ինքնաբուխ պարերով, որոնք գրավում էին անցորդների ուշադրությունը և ստեղծում յուրահատուկ մթնոլորտ: Հավաքույթը հնարավորություն էր երիտասարդների միջև կապեր հաստատելու և հանրային տարածքում հայկական ժառանգությունը խթանելու համար:

Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկերի» լեհերեն թարգմանության շնորհանդեսը Կրակովում

■ Շաբաթ օրը՝ մայիսի 17-ին, Կրակովի Ստուդենցկա 2 հասցեում գտնվող Հայկական մշակութային ընկերության կենտրոնում տեղի ունեցավ հանդիպում՝ նվիրված հայ գրականության ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Հովհաննես Թումանյանի «Ընտիր երկեր» հատորի լեհերեն թարգմանության շնորհանդեսին: Միջոցառումը վարում էր անվանի հայագետ, հրատարակության խմբագիր պրոֆեսոր, դոկտոր Անջեյ Պիսովիչը: Հատորի պատրաստմանը մասնակցել են նաև հայ գրականության մեծավաստակ թարգմանիչներ և գիտակներ դոկտոր Եժի Շոկալսկին և դոկտոր Ստանիսլավ Ուլաշեկը: Հանդիպմանը ներկա էին մշակույթի, գրականության և պատմության բազմաթիվ սիրահարներ: Հրատարակությունը լույս է տեսել Հայկական մշակութային ընկերության մշտական հրատարակչական գործունեության շրջանակներում, որը ամեն տարի լեհ ընթերցողներին է ներկայացնում հայ դասական գրականության գործեր: Նախագիծն իրականացվել է Ներքին գործերի և վարչարարության նախարարության դրամաշնորհի շնորհիվ:

Հայկական «Թանգարանների գիշեր» Վարշավայում

■ Շաբաթ օրը՝ մայիսի 17-ին, Վարշավայի Լեհահայոց մշակույթի և ժառանգության հիմնադրամը մասնակցեց համալեհական «Թանգարանների գիշեր» միջոցառմանը՝ իր հավաքածուները ներկայացնելով բազմաթիվ այցելուների: Միջոցառմանն ակտիվորեն ներգրավված էր

„Utwory wybrane” Howannesa Tumaniana – jednej z najwybitniejszych postaci literatury ormiańskiej.

Wydarzenie poprowadził prof. dr hab. Andrzej Pisowicz, znakomity armenista i redaktor publikacji. W przygotowaniu tomu uczestniczyli także dr Jerzy Szokalski i dr Stanisław Ulaszek, cenieni tłumacze i znawcy literatury ormiańskiej. Spotkanie przyciągnęło liczne grono miłośników kultury, literatury i historii.

Publikacja ukazała się w ramach stałej działalności wydawniczej OTK, które co roku przybliża polskim czytelnikom klasyczne dzieła ormiańskiej literatury. Projekt został zrealizowany dzięki dotacji Ministerstwa Spraw Wewnętrznych i Administracji.

Ormiańska Noc Muzeów w Warszawie

Fot. Władysław Deńca

■ W sobotę, 17 maja Fundacja Kultury i Dziedzictwa Ormian Polskich w Warszawie wzięła udział w ogólnopolskiej Nocy Muzeów, udostępniając swoje zbiory licznie przybyłym gościom.

W wydarzenie aktywnie zaangażowała się Organizacja Młodzieży Ormiańskiej w Polsce, która przygotowała warsztaty tradycyjnych tańców ormiańskich. Pokazy odbywały się zarówno na dziedzińcu, jak i w siedzibie Fundacji, gromadząc wielu uczestników i ciesząc się dużym zainteresowaniem.

Zwiedzający mieli również okazję wysłuchać opowieści o bezcennej kolekcji ormiańskich szat liturgicznych. Wydarzenie spotkało się z dużym uznaniem i przyciągnęło szeroką publiczność przez cały wieczór.

Spotkanie duszpasterza Ormian z biskupem siedleckim

■ Ks. Minas Hachwerdian, duszpasterz Apostolskiego Kościoła Ormiańskiego w Polsce, złożył wizytę biskupowi siedleckiemu, ks. dr. Kazimierzowi Gurdzie.

Spotkanie odbyło się w Siedlcach i dotyczyło obecności społeczności ormiańskiej w regionie oraz jej potrzeb duszpasterskich. Rozmawiano także o relacjach między Kościołem ormiańskim a Kościołem rzymskokatolickim, podkreślając ducha braterskiego dialogu i wzajemnego szacunku.

Լեհաստանի հայ երիտասարդության կազմակերպությունը, որը պատրաստել էր հայկական ավանդական պարերի վարպետության դասեր: Ցուցադրությունները տեղի էին ունենում ինչպես բակում, այնպես էլ հիմնադրամի կենտրոնում՝ հավաքելով բազմաթիվ մասնակիցների և վայելելով մեծ հետաքրքրություն: Այցելուները նաև հնարավորություն ունեցան լսելու պատմություններ հայկական պատարագի զգեստների անգին հավաքածուի մասին: Միջոցառումը մեծ գնահատանքի արժանացավ և ողջ երեկոյի ընթացքում գրավեց հանրության լայն շերտերի ուշադրությունը:

Հոգևոր հովվի հանդիպումը Սիեդլցեի եպիսկոպոսի հետ

■ Լեհաստանի Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մինաս աբեղա Հախվերդյանն այցելեց Սիեդլցեի եպիսկոպոս, դոկտոր Գերշանորի Կազիմեժ Գուրդային: Հանդիպումը տեղի ունեցավ Սիեդլցեում և վերաբերում էր տարածաշրջանում հայ համայնքի ներկայությանը և նրա հովվական կարիքներին: Քննարկվեցին նաև հայկական և հռոմեակաթոլիկ եկեղեցիների միջև հարաբերությունները՝ ընդգծելով եղբայրական երկխոսության և փոխադարձ հարգանքի ոգին:

Fot. AKO

Լեհաստան-Հայաստան երկկողմ բանակցություններ. Լեհաստանի ԱԳՆ պատվիրակության այցը Երևան

■ Մայիսի 21-24-ը Լեհաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պատվիրակությունը՝ պետքարտուղարի տեղակալ Մարեկ Պրավդայի գլխավորությամբ, պաշտոնական այցով

Rozmowy dwustronne Polska–Armenia: wizyta delegacji MSZ RP w Erywaniu

Fot. MFA

■ W dniach 21–24 maja delegacja Ministerstwa Spraw Zagranicznych Rzeczypospolitej Polskiej, kierowana przez podsekretarza stanu Marka Prawdę, przebywała z oficjalną wizytą w Erywaniu w ramach konsultacji politycznych między resortami spraw zagranicznych Polski i Armenii.

Delegacja złożyła hołd ofiarom ludobójstwa Ormian, odwiedzając kompleks pamięci w stolicy Armenii. Przy wiecznym ogniu złożono kwiaty i uczczono pamięć ofiar minutą ciszy.

W ramach wizyty odbyły się spotkania z wiceministrem spraw zagranicznych Armenii Wahanem Kostanianem oraz z ministrem spraw zagranicznych

գտնվում էր Երևանում՝ Լեհաստանի և Հայաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական խորհրդակցությունների շրջանակներում: Պատվիրակությունը հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին՝ այցելելով Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Ծաղիկներ դրվեցին հավերժական կրակի մոտ և մեկ րոպե լռությամբ ոգեկոչվեց զոհերի հիշատակը: Այցի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան Հայաստանի Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի և նախարարի տեղակալ Վահան Կոստանյանի և հետ: Բանակցությունների ընթացքում քննարկվեցին դինամիկ աշխարհաքաղաքական փոփոխություններից բխող

Fot. AGMI

Fot. AGMI

Araratem Mirzojanem. Podczas rozmów omówiono aktualne wyzwania wynikające z dynamicznych zmian geopolitycznych oraz podkreślono znaczenie wzmacniania partnerstw opartych na wspólnych wartościach i przekonaniach. Poruszono także kwestie dotyczące stosunków dwustronnych między Armenią a Polską, a także wizję i perspektywy dalszej współpracy, w tym na szczeblu Unii Europejskiej.

Wizyta potwierdziła zaangażowanie obu państw na rzecz pogłębiania dialogu politycznego i rozwoju relacji w wymiarze dwustronnym oraz europejskim.

Hołd dla matek poległych bohaterów

■ Dnia 26 maja, z okazji Dnia Matki, z inicjatywy Urzędu ds. Weteranów i Ofiar Represji Politycznych oraz Fundacji Armenian Foundation, oddano hołd symbolicznej matce Nieznanego Żołnierza – ormiance z pochodzenia Jadwidze Zarugiewiczowej oraz wszystkim matkom, które straciły synów w obronie ojczyzny.

Ambasador Armenii w Polsce, Alexander Arzumanian, wygłosił okolicznościowe przemówienie i złożył wieńce na grobie Jadwigi Zarugiewiczowej, przy Grobie Nieznanego Żołnierza oraz pod tablicą pamiątkową poświęconą Jadwidze i jej synowi Konstantemu, umieszczoną na murze Komendy Garnizonu Warszawskiego.

Modlitwę w intencji matek bohaterów, którzy oddali życie za ojczyznę, poprowadzili duchowni: duszpasterz Apostolskiego Kościoła Ormiańskiego w Polsce, ks. Minas Hachwerdian, oraz duszpasterz katolików obrządku ormiańskiego, ks. Józef Naumowicz.

Wieńce złożyli również Komisarz ds. Diaspory Republiki Armenii, Diana Howakimian, oraz przedstawiciel Fundacji Polsko-Ormiańskiej, Arsen Owsepian.

W uroczystości upamiętniającej wzięli udział przedընթացիկ մարտահրավերները և ընդգծվեց ընդհանուր արժեքների ու համոզմունքների վրա հիմնված գործընկերությունների ամրապնդման կարևորությունը: Անդրադարձ կատարվեց նաև Հայաստանի և Լեհաստանի միջև երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցերին, ինչպես նաև հետագա համագործակցության տեսլականին ու հեռանկարներին, այդ թվում՝ Եվրամիության մակարդակով: Այցը վերահաստատեց երկու պետությունների հանձնառությունը՝ խորացնելու քաղաքական երկխոսությունը և զարգացնելու հարաբերությունները երկկողմ ու եվրոպական ձևաչափերով:

Հարգանքի տուրք մայրերի հիշատակին

■ Մայիսի 26-ին՝ Մայրերի օրվա առթիվ, Լեհաստանի Վետերանների և բռնաճնշումների զոհերի գրասենյակի և «Armenian» հիմնադրամի նախաձեռնությամբ հարգանքի տուրք է մատուցվել Անհայտ զինվորի խորհրդանշական մորը՝ ազգությամբ հայ Յադվիգա Զարուգևիչովային, ինչպես նաև բոլոր այն մայրերին, ովքեր իրենց որդիներին կորցրել են հայրենիքի պաշտպանության ընթացքում:

Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպան Ալեքսանդր Արզումանյանը հանդես է եկել խորհրդանշական ելույթով և ծաղկեպսակներ է խոնարհել Յադվիգա Զարուգևիչովայի գերեզմանին, Անհայտ զինվորի շիրիմ-հուշարձանին, ինչպես նաև Վարշավայի կայազորի շենքի պատին ամրացված հուշատախտակին, որը նվիրված է Յադվիգային և նրա որդուն՝ Կոնստանտինին:

Հայրենիքի համար կյանքը զոհաբերած հերոսների մայրերի հիշատակին հոգեհանգստյան աղոթք են մատուցել Լեհաստանում Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հովիվ՝ Տեր Մինաս աբեղա Հախվերդյանը և Հայ



Fot. Ambasada RA

stawiciele władz państwowych i samorządowych, a także reprezentanci społeczności lokalnej.

Materiał przygotowano na podstawie wpisu zamieszczonego na oficjalnym profilu Ambasady Republiki Armenii w Polsce na Facebooku.

Polska delegacja na Yerevan Dialogue 2025

■ W dniach 26–27 maja w Erywaniu odbyła się druga edycja Yerevan Dialogue – największego forum międzynarodowego organizowanego w Armenii, poświęconego sprawom polityki zagranicznej, bezpieczeństwa i współpracy regionalnej. Wydarzenie organizowane jest przez Ministerstwo Spraw Zagranicznych Armenii we współpracy z Observer Research Foundation oraz partnerami z Europy i Azji.

Fot. Ambasada RA

W tegorocznej edycji bierze udział ponad 80 delegacji z całego świata. Polskę reprezentują m.in. Grzegorz Schetyna, przewodniczący Komisji Spraw Zagranicznych Senatu RP, oraz Gabriela Morawska-Stanecka, wicemarszałkini Senatu. Obecność przedstawicieli polskiego parlamentu odzwierciedla zaangażowanie Polski w sprawy regionu Kaukazu Południowego oraz jej zainteresowanie bieżącymi kwestiami bezpieczeństwa międzynarodowego. W forum uczestniczą także eksperci z Polski, reprezentujący środowiska analityczne i akademickie.

W Erywaniu obecni są również najważniejsi przedstawiciele europejskiej sceny politycznej, w tym premier Słowacji Robert Fico oraz minister spraw zagranicznych Francji Jean-Noël Barrot. Obaj politycy zabrali głos podczas sesji plenarnych forum, odnosząc się do kwestii bezpieczeństwa europejskiego oraz współpracy międzynarodowej.

Premier Armenii Nikol Paszynian w przemówieniu otwierającym podkreślił konieczność zawarcia trwałego porozumienia pokojowego z Azerbejdżanem, wskazując na determinację Armenii do osiągnięcia stabilności w regionie mimo nowych warunków przedstawianych przez stronę azerbejdżańską.

Yerevan Dialogue staje się coraz istotniejszą platformą dla międzynarodowej debaty na temat przyszłości geopolitycznej Eurazji oraz współpracy transregionalnej. Forum przyciąga polityków, ekspertów i analityków z całego świata, oferując przestrzeń do otwartego dialogu i wymiany doświadczeń.

Կաթողիկե Եկեղեցու հոգևոր հովիվ՝ Տեր Յոզեֆ Նաումովիչ քահանա:

Ծաղկեպսակներ են խոնարհել նաև Հայաստանի Հանրապետության Սփյուռքի հարցերով հանձնակատար Դիանա Հովակիմյանը և Լեհահայկական հիմնադրամի ներկայացուցիչ Արսեն Օսեպյանը:

Հարգանքի տուրքի արարողությանը մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքային գործիչներ:

Նյութը պատրաստվել է Լեհաստանում ՀՀ դեսպանության Ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակված գրառման հիման վրա:

Լեհական պատվիրակությունը «Yerevan Dialogue 2025»-ին

■ Մայիսի 26-27-ը Երևանում տեղի ունեցավ «Yerevan Dialogue»-ի երկրորդ համաժողովը՝ Հայաստանում կազմակերպվող խոշորագույն միջազգային ֆորումը՝ նվիրված արտաքին քաղաքականության, անվտանգության և տարածաշրջանային համագործակցության հարցերին: Միջոցառումը կազմակերպվում է Հայաստանի Արտաքին գործերի նախարարության կողմից (Observer Research Foundation)՝ համատեղությամբ եվրոպական ու ասիական գործընկերների: Այս տարվա համաժողովին մասնակցում էր ավելի քան 80 պատվիրակություն ամբողջ աշխարհից: Լեհաստանը ներկայացնում էր, ի թիվս այլոց, Գժեգոժ Սիսետինան՝ Լեհաստանի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահը, և Գաբրիելա Մորավսկա-Ստանեցկան՝ Սենատի փոխմարշալը: Լեհական խորհրդարանի ներկայացուցիչների ներկայությունը արտացոլում է Լեհաստանի ներգրավվածությունը Հարավային Կովկասի տարածաշրջանի հարցերում և նրա հետաքրքրությունը միջազգային անվտանգության ընթացիկ խնդիրներով: Ֆորումին մասնակցում էին նաև փորձագետներ Լեհաստանից, որոնք ներկայացնում են վերլուծական և ակադեմիական շրջանակներ: Երևանում ներկա էին նաև եվրոպական քաղաքական հարթակի կարևորագույն ներկայացուցիչներ, այդ թվում՝ Սլովակիայի վարչապետ Ռոբերտ Ֆիցոն և Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան-Նոել Բարոն: Երկու քաղաքական գործիչներն էլ ելույթ ունեցան ֆորումի լիագումար նիստերի ընթացքում՝ անդրադառնալով եվրոպական անվտանգության և միջազգային համագործակցության հարցերին: Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր բացման խոսքում ընդգծել է Ադրբեջանի հետ կայուն խաղաղության համաձայնագրի կնքման անհրաժեշտությունը՝ նշելով Հայաստանի վճռականությունը՝ հասնելու տարածաշրջանում կայունության՝ չնայած ադրբեջանական կողմի կողմից ներկայացվող նոր պայմաններին: «Yerevan Dialogue»-ը դառնում է ավելի ու ավելի կարևոր հարթակ Եվրասիայի աշխարհաքաղաքական ապագայի և միջտարածաշրջանային համագործակցության վերաբերյալ միջազգային բանավեճի համար: Ֆորումը գրավում էր քաղաքական գործիչների, փորձագետների և վերլուծաբանների ամբողջ աշխարհից՝ առաջարկելով բաց երկխոսության և փորձի փոխանակման հարթակ:

ANDRZEJ A. ZIĘBA
ԱՆԴԺԵՅ ԺԻԵՄԲԱ

POTOMKOWIE I SPADKOBIERCY: ORMIANIE W POLSCE WOBEC LUDOBÓJSTWA 1915 ROKU

ՀԵՏՆՈՐԴՆԵՐՆ ՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ. ԼԵՀԱՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Reakcja

Utożsamianie z losami historycznej ojczyzny Armenii było elementem stałym tożsamości Ormian polskich. Można go dostrzec w przekazach źródłowych od XVI aż po XXI wiek. A losy te były nacechowane tragedią i traumą. Tuż przed masakrami 1915 roku dostrzegł to odnośnie położenia ormiańskich ziem etnicznych w Imperium Osmańskim znany polski literat Adolf Nowaczyński w eseju pt. „Armenja i Ormjanie" z 1914 roku. Określając Ormian jako naród „pokarany przez Przeznaczenie", wymieniał w nim liczne pogromy oraz „chroniczne napady dzikich rozbójniczych górali kurdyjskich", nazywał te losy „jedną wielką księgą martyrologii", „istną Gehenną".

Już od przełomu XIX i XX wieku niektórzy ormiańscy uchodźcy spod prześladowań – zarówno tureckich w Imperium Osmańskim, jak azerskich w Rosji – chronili się w Galicji, mateczniku Ormian polskich, ówczesnej prowincji Austrii. Zwłaszcza masakra w Baku w 1905 roku odbiła się silnym echem we Lwowie, stolicy Galicji. Podczas pierwszej wojny światowej, czyli w apogeum prześladowań tureckich, otwarta reakcja nie była możliwa, a prasa polska, wydawana w Austrii, mogła donosić o ich przebiegu bardzo ostrożnie z uwagi na koalicyjne związki monarchii habsburskiej z prześladowcami. Bez przeszkód głos mogła zabrać tylko prasa polska w Rosji. „Echo Polskie", wydawane w Moskwie, poświęciło wtedy sprawie ormiańskiej osobny numer z 21 lutego/5 marca 1916 roku. Autorem głównego artykułu pt. „Nil desperandum" był lider tamtejszych Polaków, adwokat Aleksander Lednicki.

W tym samym czasie ormiańskokatolicki arcybiskup lwowski, Józef Teodorowicz, obmyślił plan ratunkowy, polegający na sprowadzeniu Ormian z Turcji do Galicji wschodniej, osiedleniu ich pomiędzy Ormianami polskimi i nadzieleniu ziemi z parcelowanych majątków ziemiań-

Արձագանք

Լեհահայ ինքնության կարևոր բաղադրիչներից մեկը պատմական հայրենիքի՝ Հայաստանի ճակատագրի հետ նույնացումն է: Այդ տարրն արտահայտվում է XVI դարից մինչև XXI դարի սկզբնաղբյուրներում: Իսկ այդ ճակատագրին բնորոշ են ողբերգությունն ու հոգեկան տրավման:

1915 թվականի ջարդերից անմիջապես առաջ՝ 1914 թ.-ին, հայտնի լեհ գրող Ադոլֆ Նովաչինսկին իր «Հայաստանն ու հայերը» վերնագրով էսսեում անդրադարձել է Օսմանյան կայսրության կազմում գտնվող հայկական էթնիկ տարածքների դրությանը: Հայերին նկարագրելով որպես «ճակատագրի կողմից պատժված ժողովուրդ»՝ նա հիշատակում էր բազմաթիվ ջարդեր, ինչպես նաև «վայրենի, ավազակաբարո քուրդ լեռնականների շարունակական հարձակումները»՝ հայ ժողովրդի պատմությունը բնութագրելով որպես «մեկ ամբողջական մարտիրոսագրություն» ու «իսկական գեհեն»:

Դեռևս XIX և XX դարերի սահմանագծին որոշ հայ փախստականներ՝ փրկվելով թե՛ Օսմանյան կայսրությունում թուրքական, թե՛ Ռուսաստանի կայսրությունում ադրբեջանցիների կողմից իրականացվող հալածանքներից, ապաստան էին գտնում Գալիցիայում՝ լեհահայության բնօրրանում, այն ժամանակ Ավստրիայի կազմի մեջ մտնող նահանգներից մեկում: Մասնավորապես 1905 թ. Բաքվում տեղի ունեցած կոտորածը խոր արձագանք ունեցավ Լվովում՝ Գալիցիայի մայրաքաղաքում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, այսինքն՝ թուրքական հալածանքների գագաթնակետում, բացահայտ արձագանքելն անհնար էր, իսկ Ավստրիայում հրատարակվող լեհական մամուլը կարող էր այդ իրադարձությունների մասին անդրադառնալ միայն մեծ զգուշությամբ՝ հաշվի առնելով Հաբսբուրգյան միապետության դաշնակցային հարաբերությունները հալածողների

skich. Prorządowa prasa zaatakowała go z tego powodu, plan nie został wcielony w życie. Zresztą obszar zamierzonego osadnictwa jeszcze przez pięć lat był objęty działaniami wojennymi, najpierw austriacko-rosyjskimi, potem polsko-ukraińskim wreszcie polsko-bolszewickimi. Do Polski, już od 1918 roku niepodległej, trafiło jednak nieco ocalonych, osiedlając się głównie w Warszawie i Łodzi, gdzie było łatwiej o pracę. Do archidiecezji lwowskiej przyjęci zostali dwaj ormiańscy księża katoliccy, którzy jako dzieci cudem przeżyli ludobójstwo: Howsep Kaftandżian z Brussy i Sarkis Egulian z Adany.

Po klęsce państw centralnych Turcja straciła sojuszników w Europie, ale nie zostały wobec niej podjęte niemal żadne działania karne za ludobójstwo, jakiego dokonała na swych obywatelach z racji wyznawanej przez nich religii i przynależności narodowej. Państwa zwycięskie nie zwracały na tę kwestię większej uwagi. Co więcej, Republika Armenii, utworzona w roku 1918 po rozpadzie Rosji na wschodnich obszarach historycznych ziem ormiańskich, stała się celem agresji tureckiej, w trakcie której ludobójstwo było kontynuowane.

Te kolejne cierpienia Ormian nie przeszły w Polsce niezauważone. Znajdujemy tego dowód we wspomnieniach Kazimierza Dłuskiego, jednego z delegatów polskich na konferencję pokojową w 1919 roku, a prywatnie szwagra Marii Curie. W Paryżu wszedł on w bliskie relacje z delegacją ormiańską i w ostatnim dniu lutego tego roku został zaproszony na spotkanie, na którym chciano przekonać obradujące mocarstwa, że Republika Armenii ma prawo do udziału w pracach konferencji. „Zabrałem głos [...] podnosząc dawność cywilizacji i kultury Armenii, jej ofiarne i uporczywe walki o niepodległość i prawo do tej niepodległości w imię programu [prezydenta] Wilsona " – zapisał potem.

W środowisku ormiańskim Lwowa silnym echem odbiło się zwłaszcza wystąpienie w Genewie na forum Ligi Narodów byłego polskiego premiera i słynnego pianisty, Ignacego Jana Paderewskiego, w grudniu 1920 roku. W imieniu Polski upominał się on o przyjęcie w poczet członków nowej organizacji państw globu „odwiecznie umęczonego narodu, przepełnionej smutkiem Armenii". Argumentował gorąco potrzebę dostrzeżenia takich, jak ona małych wspólnot. „Kiedy jakiś naród istnieje, istnieje także idea, [...] istnieje misja do spełnienia w historii", gdyż „chwalebnie zapisały się one w annałach ludzkich osiągnięć" i „nigdy nie wiemy, co jeszcze mogą nam dać, lub co jeszcze są zdolne wytworzyć" – mówił. „Płomień nadziei w ich oczach długie lata niewoli nie zgasiły. Proszą, aby mogły się stać się uczestnikami tego wielkiego dobrodziejstwa wolności, które triumf aliantów zaoferował ludom zmartwychwstałym. Wiele cierpiały, a cierpienie ich nie skończyło się jeszcze; zmagały się, a ich walka nie skończyła się jeszcze; było w nich tyle nadziei, i ta nadzieja trwa. Serce Polski jest z tymi, którzy cierpią, z tymi, którzy walczą, z tymi, którzy mają nadzieję". Te same myśli powtarzał w swych kazaniach abp Teodorowicz: „Narody poszczególne nie mają się zlać w jakiś amalgamat powszechny ludzkości, ale każdy z nich ma swoją misję do spełnienia w tym Królestwie Bożym, każdy z nich wnosi jakiś ton do tej wielkiej orkiestry muzycznej prawdziwie, jak św. Augustyn nazywa społeczność chrześcijańską".

Powołując się na to przesłanie Paderewskiego i wsparci autorytetem Teodorowicza, intelektualiści polscy we Lwo-

հետ: Ազատ խոսքի հնարավորություն ուներ միայն Ռուսաստանում գործող լեհական մամուլը: Մոսկվայում հրատարակվող «Echo Polskie» թերթը 1916 թ. փետրվարի 21-ին (մարտի 5) լույս տեսած համարն ամբողջությամբ նվիրված էր հայկական հարցին: «Nil desperandum» վերնագրով գլխավոր հոդվածը գրել էր այնտեղի լեհ համայնքի առաջնորդ՝ իրավաբան Ալեքսանդր Լեդնիցկին:

Այդ ժամանակահատվածում Լվովի Հայ կաթողիկե եկեղեցու արքեպիսկոպոս Հովսեփ Թեոդորովիչը մշակեց փրկության ծրագիր, որը նպատակ ուներ Թուրքիայից հայերին տեղափոխել Արևելյան Գալիցիա, բնակեցնել նրանց լեհահայ համայնքի շրջանում և հող հատկացնել մասնատված ազնվական կալվածքներից: Իշխանամետ մամուլը կոշտ է արձագանքում նրա նախաձեռնությանը, ինչի հետևանքով ծրագիրը մնում է անկատար: Ավելին՝ բնակեցման համար նախատեսված տարածքը հաջորդ հինգ տարիների ընթացքում գտնվում էր շարունակական ռազմական գործողությունների գոտում՝ սկզբում ավստրո-ռուսական, ապա լեհ-ուկրաինական և վերջապես լեհ-բոլշևիկյան պատերազմների պատճառով: Այնուամենայնիվ, 1918 թվականից սկսած՝ արդեն անկախացած Լեհաստան տեղափոխված մի շարք փրկվածներ հիմնականում հաստատվում էին Վարշավայում և Լոձում, որտեղ աշխատանքի հնարավորությունները համեմատաբար ավելի հասանելի էին: Լվովի արքեպիսկոպոսությունում ընդունվել էին երկու հայ կաթոլիկ հոգևորականներ՝ Բրուսայից Հովսեփ Քաֆթանջյանը և Ադանայից Սարգիս Եգուլյանը, ովքեր դեռ մանկության տարիներին հրաշքով փրկվել էին ցեղասպանությունից: Կենտրոնական պետությունների պարտությունից հետո Թուրքիան զրկվեց իր եվրոպացի դաշնակիցներից, սակայն գործնականում ոչ մի պատժամիջոց չկիրառվեց նրա կողմից իր քաղաքացիների նկատմամբ իրականացված զանգվածային հանցագործության համար, որի շարժառիթը նրանց կրոնական և ազգային պատկանելությունն էր: Հաղթած պետությունները այս հարցին գրեթե ուշադրություն չէին դարձնում: Ավելին, 1918 թվականին՝ Ռուսական կայսրության փլուզումից հետո, պատմական հայկական տարածքների արևելյան հատվածում ձևավորված Հայաստանի Հանրապետությունը դարձավ թուրքական նոր ագրեսիայի թիրախ, որի ընթացքում շարունակվեց նաև հայերի ցեղասպանությունը:

Հայ ժողովրդի այս հերթական տառապանքները Լեհաստանում չմնացին աննկատ: Դրա վկայությունը կարելի է գտնել Կազիմեժ Դլուսկու հուշերում: Նա 1919 թ.-ին խաղաղության համաժողովում Լեհաստանը ներկայացնող պատվիրակներից էր և, ի դեպ, Մարիա Կյուրիի փեսան: Փարիզում նա սերտ կապեր հաստատեց հայկական պատվիրակության հետ և այդ տարվա փետրվարի վերջին օրը հրավիրվեց մի հանդիպման, որի նպատակն էր համոզել համաժողովին մասնակցող պետություններին, որ Հայաստանի Հանրապետությունը լիիրավ իրավունք ունի մասնակցելու նրա աշխատանքներին: «Ես նույնպես հանդես եկա խոսքով [...] շեշտելով հայկական քաղաքակրթության և մշակույթի հնությունը, նրա ինքնազոհ և հետևողական պայքարը անկախության համար, ինչպես նաև այդ անկախության իրավունքը՝ [նախագահ] Վիլսոնի ծրագրի հիման վրա»,– հետագայում գրել է նա: Լվովի հայ համայնքում հատկապես մեծ արձագանք գտավ 1920 թվականի դեկտեմբերին Ժնևում՝ Ազգերի լիգայի հարթակում, Լեհաստանի նախկին վարչապետ և անվանի դաշնակահար Իգնացի Յան Պադերևսկու ելույթը: Լեհաստանի անունից նա խնդրեց «դարերով հալածված և տխրությամբ լցված հայ ազգին» Ազգերի Լիգա անդա-

Rafał Lemkin
Ռաֆայել Լեմկին

wie, wspólnie z miejscowymi Ormianami, założyli na początku 1921 roku Towarzystwo Polsko-Ormiańskie, działające – jak czytamy w „Gazecie Lwowskiej" (nr 4) – „w poczuciu potrzeby odnowienia i wzmożenia wzajemności dla zadań i interesów wspólnych obu narodów, polskiego i ormiańskiego, wobec Wschodu i Zachodu". Działali w nim emigranci z Turcji – ksiądz Bohos Kirmizjan i inż. Garabed Keuprulian – wraz z potomkami starych rodów ormiańsko-polskich – księdzem Bogdanem Dawidowiczem, Romanem Barączem, Jakubem Moszoro, Antonim Teodorowiczem – oraz z Polakami – Andrzejem Gawrońskim i Janem Grzegorzewskim (orientalistami), Janem Parandowskim i Michałem Rolle (literatami). Było to wyrazem sympatii dla Ormian, zrodzonej zarówno wskutek wielowiekowego współżycia na ziemiach polskich, jak też tragedii ich narodu we własnej ojczyźnie.

W tym samym czasie we Lwowie studiował prawo Rafał Lemkin. O zbrodniach tureckich przeczytał w prasie polskiej w 1921 roku. Obszernie donosiła ona o berlińskim procesie Soghomona Tehliriana, który zabił Mehmeda Talaata, byłego ministra spraw wewnętrznych Turcji i architekta ludobójstwa Ormian. W swej autobiografii Lemkin wspomina, że doniesienia te wzbudziły w nim pierwsze refleksje nad potrzebą międzynarodowych sankcji karnych za zbrodnie tego typu. Przedyskutował je najpierw z lwowskimi profesorami. Ich obiekcje, uzasadniane zamակցելու մասին: Հիմնավորեց, որ պետք է ուշադրություն դարձնել հայերի նման փոքր ազգերին: «Եթե գոյություն ունի որևէ ժողովուրդ, ապա գոյություն ունի նաև գաղափար, [...] և գոյություն ունի իրականացվելիք առաքելություն», քանի որ «փառահեղորեն հիշատակվել են նրանք մարդկության ձեռքբերումների ժամանակագրության մեջ» և «երբեք չենք կարող ասել, թե դեռ ինչեր կարող են մեզ տալ ու ինչերի են ընդունակ».– ասել է նա: «Անազատության երկար տարիները դեռ չեն կարողացել մարել հույսի կայծերը նրանց աչքերում: Խնդրում են, որպեսզի կարողանան մասնակցել այդ մեծ բարեգործությանը՝ ազատությանը, ինչը դաշնակիցների հաղթանակը տվեց վերածնված ժողովուրդներին: Շատ են տառապել, բայց տառապանքները դեռ չեն վերջացել, շատ են պայքարել, բայց իրենց պայքարը դեռ չի ավարտվել, այնքան հույս է եղել նրանց մեջ, բայց այդ հույսը դեռ ապրում է: Լեհաստանի սիրտը նրանց հետ է, ովքեր տառապում են, նրանց հետ է, ովքեր պայքարում են, նրանց հետ է, ում հույսը դեռ ապրում է»: Հաճախ կրկնելով նման մտքեր՝ արքեպիսկոպոս Հովսեփ Թեոդորովիչն իր քարոզներում ասում էր. «Ազգերը չպետք է ձուլվեն մարդկության ընդհանուր զանգվածի մեջ: Ամեն ազգ ունի իր առաքելությունը Աստծո արքայությունում և իր յուրահատուկ նոտան է հնչեցնում այդ մեծ երաժշտական նվագախմբում, ճիշտ այնպես, ինչպես Սուրբ Ավգուստինն (Օգոստինոս) է բնութագրում քրիստոնեական համայնքը»:

sadą suwerenności państw, nie przekonały go: „przecież suwerenność państw oznacza prowadzenie niezależnej polityki zagranicznej i wewnętrznej, wznoszenie szkół, budowanie dróg, mówiąc krótko, wszystkie te typy aktywności, które ukierunkowane są na dobrobyt ludu; suwerenność nie może być rozumiana jako prawo do zabijania milionów niewinnych ludzi“. Doszedł do wniosków brzmiących niczym echo mowy Paderewskiego i kazań Teodorowicza: „zróżnicowanie narodów, grup religijnych, ras jest esencjonalne dla cywilizacji, ponieważ każda z tych grup ma misję do wypełnienia i wkład do zrobienia w sensie kultury; zniszczenie tych grup jest przeciwne woli Stwórcy i niszczy duchową harmonię ludzkości“. Powoływał się na ormiańskie zabiegi w Lidze Narodów, z którymi mowa polskiego premiera była związana: „W Turcji więcej niż 1 200 000 ludzi zostało zabitych bez żadnej innej przyczyny, niż ta, że byli chrześcijanami. [...] Po zakończeniu wojny około 150 tureckich zbrodniarzy wojennych zostało aresztowanych i internowanych na Malcie przez władze brytyjskie. Ormianie wysłali delegację na konferencję pokojową w Wersalu. Domagali się sprawiedliwości. Wtem pewnego dnia delegacja przeczytała w gazetach, że wszyscy tureccy zbrodniarze wojenni zostali zwolnieni. Byłem zszokowany. Naród został zabity, a winni zostali uwolnieni. Dlaczego jest karany człowiek, gdy zabije innego człowieka? Dlaczego zabicie milionów jest mniejszą zbrodnią, niż zabicie jednostki?”. Proces w Berlinie przekształcił się w sąd na Turcją. Zawezwani świadkowie przedstawili straszliwą panoramę zbrodni. „Nie znałem wszystkich odpowiedzi, ale poczułem, że prawo przeciw tego typu morderstwu musi zostać zaakceptowane przez świat“ – podsumował swe ówczesne przemyślenia Lemkin. Już w 1933 roku ujął je w formie raportu na konferencję w Madrycie, w której uczestniczył z ramienia Polski. Eksterminację masową nazwał aktami barbarzyństwa i wandalizmu.

Do swych planów osiedleńczych powrócił też w grudniu 1928 arcybiskup Teodorowicz. Tuż po synodzie biskupów ormiańskokatolickich w Rzymie, poświęconemu tragedii ludobójstwa, wezwał wiernych do wsparcia ormiańskiego przemysłowca Stefana Asłanoffa, który chciał sprowadzić uchodźców ormiańskich tułających się na sowieckiej Ukrainie. Problem ukarania Turcji w porozumieniu z arcybiskupem usiłował podjąć w latach trzydziestych major Zygmunt Tebinka , Ormianin polski, poseł na sejm z Pomorza.

Tragedia ormiańska zaistniała też w tym czasie w czołowych działach literatury polskiej, pióra Stefana Żeromskiego i Zofii Nałkowskiej (o czym pisze Grzegorz Pełczyński w niniejszym numerze „Munetiku”). Bardzo szybko po ukazaniu się głośnej powieści Franza Werfla pt. „Czterdzieści dni Musa Dagh” (1933) wyszło w Polsce jej tłumaczenie na język polski (1936), dokonane przez Wiktora Rotsztajna (użył nazwiska Halski). Zanim jeszcze czytelnik polski mógł je przeczytać, Halina Skolimowska na łamach czasopisma Ormian polskich „Gregoriana” obszernie recenzowała dzieło Werfla, nazywając je „eposem walki ludu armeńskiego o prawo do życia ” (1935).

Doświadczenie podobieństwa losu

Druga wojna światowa przyniosła krwawe prześladowania społeczności ormiańskiej także w Polsce. Nacjonalistyczne podziemie ukraińskie zorganizowało ludobój-

Ականջալուր լինելով Պադերևսկու ուղերձին, Լվովի մտավորականներն ու հասարակական գործիչները 1921 թվականի սկզբին հիմնեցին Հայ-լեհական ընկերությունը, որը, ինչպես նշվում է «Լվովյան թերթ»-ի (համար 4) էջերում, գործում էր «երկու ժողովուրդների ընդհանուր շահերի և հարցերի վերականգնման և ընդլայնման անհրաժեշտությունից ելնելով՝ ընդդեմ Արևելքի և Արևմուտքի»: Ընկերության կազմում ընդգրկված էին Թուրքիայից ներգաղթածներ՝ քահանա Պողոս Կիրմիզյանը և ինժեներ Կարապետ Քյոպրուլյանը, ինչպես նաև հին լեհահայ տոհմերի ժառանգներ՝ քահանա Բոգդան Դավիդովիչը, Ռոման Բարանչը, Յակուբ Մոշորոն և Անտոնի Թեոդորովիչը, ինչպես նաև լեհեր՝ արևելագետներ Անդժեյ Գավրոնսկին և Յան Գրեգոժևսկին, գրողներ Յան Պարանդովսկին և Միխայել Ռոլլեն: Դա հայերի նկատմամբ ունեցած համակրանքի արտահայտություն էր, որը ծագել էր թե՛ նրանց բազմադարյա համակեցությունից Լեհաստանի հողերում, թե՛ իրենց ժողովրդի հայրենիքում տեղի ունեցած ողբերգությունից:

Այդ նույն ժամանակ՝ Լվովում, իրավագիտություն էր ուսանում Ռաֆայել Լեմկինը: 1921 թվականին լեհական մամուլում նա կարդացել էր թուրքական հանցագործությունների մասին: Լեհական մամուլը մանրամասն լուսաբանում էր Բեռլինում կայացած Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, որը կազմակերպվել էր Մեհմեդ Թալեաթի՝ Թուրքիայի նախկին ներքին գործերի նախարարի և Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուի սպանության համար: Իր ինքնակենսագրության մեջ Լեմկինը հիշատակում է, որ այդ տեղեկություններն են իր մեջ սերմանել առաջին մտքերը՝ նման հանցագործությունների դեմ միջազգային պատժամիջոցների անհրաժեշտության վերաբերյալ: Այդ մտքերը նա սկզբում քննարկել է Լվովի պրոֆեսորների հետ: Նրանց առարկությունը, հիմնավորված պետությունների ինքնիշխանության սկզբունքով, չհամոզեցին նրան. «Պետությունների ինքնիշխանությունը նշանակում է ներքին և արտաքին քաղաքականության անկախություն, դպրոցների և ճանապարհների կառուցում, կարճ ասած այնպիսի գործողությունների իրականացում, որոնք ուղղված են ժողովրդի բարեկեցությանը և ինքնիշխանությունը չի կարող հասկացվել որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք»: Նա եկավ մի եզրակացության, որը նման է Պադերևսկու ուղերձի արձագանքին. «Ժողովուրդների, կրոնական խմբերի, ռասսաների բազմազանությունը քաղաքակրթության հիմքն է հանդիսանում, քանի որ այդ խմբերից յուրաքանչյուրն առաքելություն ունի իրականացնելու և առաջադրանք ունի կատարելու մշակույթի ոլորտում: Այդ խմբերի ոչնչացումը Տիրոջ կամքին դեմ է և խաթարում է մարդկության հոգևոր ներդաշնակությունը»: Հղում է կատարում Ազգերի Լիգայում հայկական հարցին, որին նվիրված էր լեհ վարչապետի խոսքը. «Թուրքիայում ավելի քան 1.200.000 հոգի սպանվել է առանց այլ պատճառի, քան այն, որ եղել են քրիստոնյաներ: [...] Պատերազմի ավարտից հետո բրիտանական իշխանությունների կողմից մոտ 150 թուրք զինվորական հանցագործներ ձերբակալվեցին և պահվեցին Մալթայում: Հայերը պատվիրակություն ուղարկեցին Վերսալի խաղաղության համաժողովին և արդարություն պահանջեցին: Որից հետո, հանկարծ թերթերից տեղեկացան, որ բոլոր թուրք մարդասպաններն ազատ են արձակվել: Ցնցվել էի:

Ժողովուրդ է կոտորվել, իսկ մեղավորներն ազատ են արձակվել: Ինչո՞ւ է այդ դեպքում պատժվում մարդը, երբ այլ մարդու է սպանում: Ինչո՞ւ է միլիոնների սպանությունը

stwo na Kresach południowo-wschodnich. Mordowano tych, których nacjonaliści zakwalifikowali jako element obcy na ziemiach projektowanej Ukrainy. Ofiarami masowej zbrodni obok Polaków (także Żydów i Czechów) padli Ormianie polscy w Kutach, Baniłowie Ruskim i innych miejscowościach.

Doświadczenie tego samego losu, jaki kilka dziesiątków lat wcześniej spotkał pobratymców w Imperium Osmańskim, wzmocniło wśród ocalonych z tej rzezi poczucie wspólnoty z ofiarami tureckich i kurdyjskich prześladowców. Choć między oboma zagładami istniała dysproporcja w wymiarze ilościowym, dla polskich Ormian – wspólnoty nigdy nie przekraczającej kilku tysięcy członków – strata własna, poniesiona w latach 1941-1945, była olbrzymia. A okrucieństwo, jakiego doświadczyli Ormianie w czasie obu prześladowań było identyczne. Odtąd pamięć o nich zlała się w odczuciu polskich Ormian w jedno bardzo osobiste doznanie, co do dziś stanowi szczególną cechę, odróżniającą przeżywanie Ludobójstwa 1915 roku w Polsce względem Armenii i diaspory ormiańskiej.

Խաչքարի օծման արարողությունը տեղի ունեցավ 2004 թվականի ապրիլի 17-ին: Մասնակիցների թիվն այնքան մեծ էր, որ կազմակերպիչները դժվարությամբ էին հավատում իրենց աչքերին: Հայերն ու լեհերը բազմությամբ լցրել էին Սուրբ Նիկոլայ եկեղեցու բակը: Միջոցառմանը ներկա էին նաև քաղաքային խորհրդի անդամներ, Սեյմի պատգամավոր Յան Ռոկիտան, իսկ դեսպան Հովակիմյանը չէր թաքցնում իր ուրախությունը: Կարդացվեց աղոթք՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին՝ այն նույն աղոթքը, որը հնչեցրել էր Հովհաննես Պողոս Երկրորդ Պապը 2001 թվականի սեպտեմբերին՝ Երևանում՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահա-

մալիրում: Սակայն թուրքական արձագանքները չուշացան: 2004 թվականի մայիսի 10-ին Անկարայում Լեհաստանի դեսպան Անդժեյ Անանիչը Վարշավային հաղորդեց, որ Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունը Կրակովի խաչքարի կապակցությամբ հատուկ բողոքագիր է տարածել, ինչպես նաև լեհական դեսպանատունը ստացել է բազմաթիվ բողոքներ: Հատուկ ուշագրավ են այդ բողոքները ներկայացրած կազմակերպությունների անվանումները, որոնք հստակ ցույց են տալիս Թուրքիայի իշխանությունների կեղծավոր մոտեցումը Հայոց ցեղասպանության հարցում. Հայկական ահաբեկչությունից տուժած թուրքերի միություն, Բիթլիսում հայկական ներխուժումների հետևանքով տուժածների կազմակերպություն, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայկական բանվորական ջոկատների ջարդերի ենթարկվածների ասոցիացիա:

Անխզելի հիշողություն

Լեհաստանի փոխարտգործնախարար Տրուշչինսկու հետ զրույցում դեսպան Ազերիի հիշատակած «երջանկությունը» երկար չտևեց: Այն գրեթե անմիջապես մարեց՝ հայ ժողովրդի՝ իր հիշողության իրավունքի համար մղած առաջին, բայց հաղթական այդ ճակատամարտից հետո: 2005 թվականի ապրիլին Լեհաստանի Սեյմը ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև: Նույն տարում Ժեշուվում առաջացավ գաղափար՝ տեղական ֆառային (ծխական) եկեղեցու պատին տեղադրել հուշատախտակ՝ նվիրված հայ ժողովրդի հիշողության համար կարևոր իրադարձություններին, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությանը: Նախաձեռնության հեղինակը՝ մասնագիտությամբ նոտար և հայ համայնքի ակտիվիստ Մարիա Ստաշալեկը, առաջարկը ներկայացրեց տեղական իշխանություններին: Նախաձեռնությունը ստացավ լիակատար աջակցություն ինչպես պետական, այնպես էլ եկեղեցական համապատասխան մարմինների կողմից: Ուշագրավ է մի տեսակետ, որը կարդում ենք Վարշավայում գործող Պայքարի և նահատակության հիշատակի պաշտպանության խորհրդի աշխատակցի կազմած գրությունում՝ նախատեսված վերջնական համաձայնություն տալու նպատակով: Հեղինակը, մանրամասն նկարագրելով Կրակովի խաչքարի շուրջ առաջացած վեճերը, նշում էր, որ թեև թուրքական իշխանությունները հույս էին հայտնել, թե «այսպիսի դեպքեր ապագայում այլևս չեն կրկնվի», այնուամենայնիվ՝ «Պարզ արդարությունը պահանջում է աջակցել հայերին այս հարցում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքերի կողմից իրականացված հանցագործությունները հայերի նկատմամբ հստակ ցեղասպանություն են՝ կատարված ազգային և կրոնական պատկանելության հիման վրա: Պայքարի և նահատակության հիշատակի պաշտպանության խորհուրդը չպետք է խուսափի այս նախաձեռնության վերաբերյալ կարծիք հայտնելուց: Սակայն դրա խառնված բովանդակությունը հստակ չէ և ձևակերպված է այնպես, որ պատահական ընթերցողի (որն, ըստ էության, կլինի մեծամասնություն) համար կարող է մնալ անհասկանալի: Ուստի առաջարկում եմ Խորհրդի եզրակացության մեջ հորդորել վերանայել գրության կառուցվածքն ու բովանդակությունը (այլապես Հայոց ցեղասպանության թեման առաջին պլան չէր գա)»,– այսպես էր ձեւակերպված դիմումը: Արդյունքում, հուշատախտակի հիմնական գրության ներքևում հայտնվեց հետևյալ ձևակերպումը. «Թուրքիայում իրականացված ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ, որի ընթացքում մեկուկես միլիոն հայեր զոհվեցին՝ քրիստոնեական հավատքի համար»:

Գրության մեջ առանձնապես կարևոր է նաև այն հիմնավորումը, որը վկայում է տվյալ ժամանակաշրջանի լեհական պաշտոնական շրջանակների համոզմունքների մասին Գրության հեղինակը հղում էր անում «հայ մշակույթի կարևորությանը», «հայերի ներդրմանը Ռեչպոսպոլիտայի մշակութային կյանքում, նրանց արժանիքներին ու Լեհաստանի համար կրած զոհաբերություններին», ինչպես նաև «Հայ ժողովրդի նահատակությանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին»: Հայոց ցեղասպանության հիշատակումներն ու հիշատակի միջոցառումները շարունակվում էին: Լեհաստանում ավելանում էին խաչքարերը՝ հիշատակի արձանագրություններով: Առաջ եկան նաև լեհական առաջին գիտական ուսումնասիրությունները. հատկապես հարկ է նշել պրոֆեսոր Գժեգոժ Կուխարչիկի «XX դարի առաջին Հոլոքոստը» վերնագրով գիրքը, ինչպես նաև արտասահմանյան աշխատությունների թարգմանությունները: 2015 թվականին Կրակովում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առաջին իսկապես զանգվածային ցույցը: Բացի հայ համայնքի անդամներից՝ մասնակցում էին համալսարանների ուսանողներ և պրոֆեսորներ, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի հյուպատոսները, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, հոգևորականներ և հասարակական գործիչներ:

2025 թվականին ևս նշվեց Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցը, որի մասին մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել «Մունետիկ» եռամսյա հանդեսի այս համարում:

Այս տարվա տխուր դրվագը խորհրդարանի Ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նախագահի, ձախակողմյան պատգամավոր Վանդա Նովիցկայի կտրուկ մերժումն էր՝ հանձնաժողովի աշխատանքներում հայկական հիշողության թեմայի ընդգրկման հարցով: Այդ առաջարկով հանդես էր եկել Հրաչյա Բոյաջյանը՝ Ազգային և էթնիկական փոքրամասնությունների համատեղ հանձնաժողովում հայկական համայնքի ներկայացուցիչը: Տիկին Նովիցկան ուղարկեց հայերին Արտաքին գործերի նախարարություն՝ հիմնավորելով, թե Հայոց ցեղասպանությունը արտաքին քաղաքականության խնդիր է, ոչ թե ներքին՝ լեհական: Դժվար է հասկանալ՝ արդյոք այս տեսակետը առաջացել է Թուրքիայի կամ Ադրբեջանի արձագանքներից վախենալուց, թե՞ անտարբերությունից: Պատգամավորը հրաժարվեց որևէ քննարկումից: Ուրեմն, եկեք հարգանքով ընդունենք, որ եթե պատճառը երկրորդն է, ինչպես ասում էին հին մտավորականները՝ «qui ignorat, non peccat»: Իսկ եթե պատճառը և առաջինն է, և երկրորդը, ապա դա նույնպես կարելի է հասկանալ, որովհետև՝ «timendi causa est nescire»:

Լեհական իրականությունում հայերի ցեղասպանության մասին՝ գրականության մեջ, պատմագրությունում և հասարակական հուշերում, գրել են Արկադիուշ Մուրավիեցը, Ադամ Բալցերը, Ռիչարդ Շավլովսկին, Վլոջիմեժ Բոլցկին, Դոմինիկա Մարիա Մացիոսը, Աննա Պարադովսկան, Զբիգնև Տ. Շմուրլոն, Հրանուշ Դանիելյանը և Յոաննա Սլավինսկան: Նրանք, ովքեր ցանկանում են ավելի խորապես ծանոթանալ այս թեմային, խորհուրդ եմ տալիս ուսումնասիրել նրանց հրապարակումները:

GRZEGORZ PEŁCZYŃSKI

POLSCY PISARZE O LUDOBÓJSTWIE ORMIAN

Ludobójstwo Ormian dokonane w Turcji podczas pierwszej wojny światowej i wkrótce po niej to przerażająca zbrodnia, wobec które zachowanie obojętności wydaje się niemożliwe. Zamordowano wtedy około półtora miliona ludzi i to najczęściej z niewyobrażalnym okrucieństwem. Setki tysięcy rozpierzchły się zaś po całym świecie.

A jak do tej zbrodni ustosunkowywali się Polacy? Na to pytanie odpowiedzieć niełatwo. W ciągu ponad stu lat, które od niej minęły, Polacy sami przeżywali wiele złych okresów i nie zawsze mogli poświęcić swą uwagę temu, co wydarzyło się w dość odległej od ich kraju Turcji. Aczkolwiek zawsze znalazł się ktoś, kto im o tym przypomniał. Przede wszystkim żyjący w Polsce Ormianie, którzy głęboko przeżyli to, co zrobili ich rodakom Turcy i czuli się zobowiązani opowiedzieć o tym Polakom. A zatem mogli mieć oni przynajmniej ogólną wiedzę na ten temat. Ta wiedza zaś wzbudzała ich współczucie i protest.

O nieobojętności Polaków względem tego genocydu w jakiejś mierze zaświadczają najwybitniejsi polscy pisarze, którzy w swych powieściach, opowiadaniach czy esejach o nim pisali. Wprawdzie żaden z nich nie stworzył tak słynnego dzieła jak „Czterdzieści dni Musa Dah" Franza Werfla, jednak ich osiągnięcia, choć nieliczne, są z pewnością niebagatelne. Warto się im przyjrzeć.

W latach dwudziestych, a zatem niedługo po ludobójstwie, temat ten pojawił się na kartach dwóch po-

ԳԺԵԳՈԺ ՊԵԼՉԻՆՍԿԻ

ԼԵՀ ԳՐՈՂՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայոց ցեղասպանությունը, որը տեղի ունեցավ Թուրքիայում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից անմիջապես հետո, սարսափելի հանցագործություն է, որի հանդեպ անտարբեր մնալն անհնարին է: Այդ ժամանակ սպանվեց մոտ մեկուկես միլիոն հայ՝ հաճախ անասելի դաժանությամբ, իսկ հարյուր հազարավոր մարդիկ ցրվեցին ամբողջ աշխարհով մեկ:

Ավելի քան հարյուր տարիների ընթացքում, որ անցել է այս ողբերգությունից ի վեր, լեհ ժողովուրդն ինքն էլ իր պատմության մեջ անցել է ծանր փորձությունների միջով և միշտ չէ, որ հնարավորություն է ունեցել ուշադրություն դարձնելու իրենցից բավական հեռու՝ Թուրքիայում տեղի ունեցած իրադարձություններին: Սակայն միշտ եղել են մարդիկ, ովքեր հիշեցրել են նրանց այդ մասին: Առաջին հերթին՝ Լեհաստանում բնակվող հայերը, որոնք խորապես վերապրել են թուրքերի կողմից իրականացված ոճրագործությունները իրենց ազգակիցների նկատմամբ և զգում են իրենց պարտքը՝ այդ պատմությունը փոխանցելու լեհ ժողովրդին: Արդյունքում լեհերը կարողանում են գոնե ընդհանուր պատկերացում կազմել այս ողբերգության մասին: Այս գիտակցությունն էլ նրանց մեջ ծնել է կարեկցանք և բողոք:

Լեհ ժողովրդի անտարբեր չլինելու մասին Հայոց ցեղասպանության նկատմամբ որոշ չափով վկայում են Լեհաստանի նշանավոր գրողները, որոնք իրենց վեպերում, պատմվածքներում կամ էսսեներում անդրադարձել են այդ ողբերգությանը: Թեև նրանցից ոչ ոք չի ստեղծել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի համարժեք՝ համաշխարհային ճանաչում վայելող ստեղծագործություն, նրանց՝ նույնիսկ փոքր թվացող ներդրումները, անտարակույս, արժեքավոր են: Այդ ստեղծագործություններին արժե ուշադրություն դարձնել:

Քսանականներին, այսինքն, անմիջապես ցեղասպանությունից հետո, այս թեմային անդրադարձ է կատարվել երկու վեպերում: Առաջինը՝ Ստեֆան Ժերոմսկու «Գարնան նախերգանքը» վեպն է, որը հրատարակվել է 1924 թվականին: Այս ստեղծագործության մեջ հեղինակը ներկայացնում է երիտասարդ լեհ Ցեզարի Բարիկայի ճակատագիրը Հոկտեմբերյան հեղափոխության տարիներին և նորաստեղծ լեհական պետության սկզբնական շրջանում: Բարիկան բնակվում էր Բաքվում այն ժամանակ, երբ այնտեղ տեղի էին ունենում հայերի ջարդերը՝ փաստորեն շարունակությունը այն ցեղասպանության, որը սկսել էին թուրքերը 1915 թվականին: Ժերոմսկին այս մասին գրել է՝ հիմնվելով երկու լեհ կնոջ պատմությունների վրա, ովքեր այդ ժամանակ բնակվում էին Բաքվում:

Հեղինակը պնդում է, որ 1918 թվականի սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած հայերի զանգվածային կոտորածը, որին մասնակցել են ինչպես ադրբեջանցիները (վեպում նշված՝ որպես թաթարներ), այնպես էլ թուրքական կանոնավոր զորքերը, ներկայացվել է որպես վրեժխնդրություն նույն տարվա մարտյան իրադարձությունների համար, երբ, ըստ որոշ տեղեկությունների, հայերը կոտորել էին նրանց համերկրացիներին: Սակայն գրողը հաշվի չի առնում, որ ողջ Անդրկովկասում, այդ



Stefan Żeromski,
Przedwiośnie
Ստեֆան Ժերոմսկի,
«Գարնան նախերգանք»



Zofia Nałkowska,
Choucas
Սոֆյա Նալկովսկայա,
«Choucas»

wieści. Pierwsza to „Przedwiośnie" Stefana Żeromskiego, opublikowana w 1924 r. Autor przedstawia w niej losy młodego Polaka, Cezarego Baryki w okresie rewolucji październikowej i w początkowych latach istnienia państwa polskiego. Ów Baryka mieszkał w Baku, kiedy tam miały miejsce pogromy Ormian, będące właściwie częścią tego, co rozpoczęli Turcy w 1915 r. Żeromski więc o tym napisał, napisał na podstawie wiadomości uzyskanych od dwóch Polek, mieszkających wtedy w Baku.

Autor twierdzi, że wymordowanie Ormian w tym mieście we wrześniu 1918 r., w czym brali udział Azerowie (zwani w książce Tatarami) wraz z regularnymi oddziałami tureckimi, stanowiło odwet za rzeź ich rodaków dokonaną przez Ormian w marcu tego samego roku. Pisarz nie uwzględnił jednak, iż na całym Zakaukaziu, także w Baku, sytuacja polityczna była w tym czasie wyjątkowo skomplikowana i w związku z tym nie można obarczać Ormian winą za zbrodnie dokonane na Azerach.

թվում՝ Բաքվում, քաղաքական իրավիճակը այդ ժամանակ չափազանց բարդ ու խառն էր, և այդ պայմաններում անհնարին էր ամբողջովին մեղադրել հայերին ադրբեջանցիների դեմ իրականացված վայրագությունների համար:

Ժերոմսկու գործած սխալները կարող էր շտկել Ֆիլիպ Բայոնը, որը 2002 թվականին «Գարնան նախերգանքի» հիման վրա նկարահանել էր հեռուստասերիալ: Սակայն, ցավոք, նա այդ հնարավորությունից չօգտվեց: Դրան դեմ դուրս եկավ Ադամ Տերլեցկին՝ հայ մշակութային ընկերության այն ժամանակվա նախագահը, ով մեղադրեց Բայոնին պատմությունը ադրբեջանական մեկնաբանությամբ ներկայացնելու համար: Արժե նշել նաև, որ սերիալի համարտադրողներից մեկն ադրբեջանական հեռուստատեսությունն էր:

Այնուամենայնիվ, շարունակում են զարհուրեցնել Բաքվի պատկերները, որտեղ ադրբեջանցիներն ու թուրքերը կոտորում էին հայերին: «Ծանոթ փողոցներն ահավոր տեսք ունեին, – գրում է Ժերոմսկին: – Առանց չափազանցության կամ փոխաբերության կարելի է ասել, որ արյունը չէր հոսում առուներով, այլ լցվում էր ամբողջ մակերեսով՝ դառնալով սարսափազդու հեղեղ: Այն թափվում էր դեպի ծով՝ ներկելով մաքուր ալիքները: Կոտորված հայերի դիերը բեռնատարներով ու սայլերով բերում էին ափ ու նետում ծով: Կասպից ծովի հեռավոր շրջաններից ձկները, զգալով այդ անսպառ կերակուրը, խումբ առ խումբ լողում էին դեպի այնտեղ: Բայց չէին կարող ամեն ինչ կլանել ու մարսել: Ծովը չէր ցանկանում ընդունել կամ պահել մարդկային զոհը: Իր մաքուր, անդադար շարժվող ալիքների ուժով այն հետ էր մղում այդ դիերը: Վերջիվերջո առաջացավ անհրաժեշտություն՝ այդ դիակները թաղելու ափին՝ վարակից խուսափելու նպատակով, քանի որ հարավային շոգին դիերը շատ արագ էին քայքայվում»:

Հայոց ցեղասպանությանը նվիրված երկրորդ վեպը Սոֆյա Նալկովսկայայի «Choucas»-ն է, որը 1926 թվականին տպագրվել է «Տիգոդնիկ Իլուստրովանի» («Նկարազարդ շաբաթաթերթ») ամսագրում, իսկ մեկ տարի անց՝ 1927-ին, լույս է տեսել որպես առանձին գիրք: Վեպի ենթավերնագիրը՝ «Միջազգային վեպ», վկայում է հեղինակի նպատակների մասին՝ շեշտադրելով, որ ժողովուրդները, որոնք վերջերս պատերազմել են միմյանց դեմ, այժմ պետք է գտնեն համերաշխ գոյակցության ուղիներ: Վեպում տարբեր ազգությունների ներկայացուցիչները հանդիպում են Շվեյցարիայի առողջարաններից մեկում, որոնց թվում կան նաև հայեր, որոնք փրկվել են Օսմանյան Թուրքիայի իրականացրած ջարդերից, սեփական աչքերով տեսել են այդ սարսափները և երբեք չեն մոռանա:

Օրիորդ Հովսեփյանն այսպես է պատմում իր հայրենակիցների ոչնչացման մասին. «Թուրքերը սպանում էին նրանց բնակարաններում, փողոցներում, բանտերում: Փոքր տղաներին հավաքում էին քաղաքի հրապարակներում և մորթում կացիններով ու դանակներով, իսկ ոստիկանության պատնեշի մյուս կողմում նրանց մայրերը ցավից գոռում ու խելագարվում էին: Ամբողջ հայկական քաղաքներ, ուրվականների նման ամբողջ զորքեր, մահվան դատապարտված ամբոխներ քշվում էին ճահիճներով ու անապատներով՝ այն ճանապարհներով, որոնց երկայնքով փտում էին նրանց նախորդների դիակները: Ճանապարհին սովից և վարակներից մահանում էին տղամարդիկ, կանայք, երեխաներ: Նրանք հանգստանում էին գերեզմանոցներում՝ թունավոր մթնոլորտում,

Błędy Żeromskiego mógł sprostować Filip Bajon, który według „Przedwiośnia" nakręcił serial telewizyjny w 2002 r. Niestety, tego nie uczynił. Protestował przeciwko temu Adam Terlecki, ówczesny prezes Ormiańskiego Towarzystwa Kulturalnego, zarzucając Bajonowi, że pozwolił sobie narzucić azerską interpretację dziejów. Dodać tutaj trzeba, iż telewizja azerbejdżańska była współproducentem serialu.

Jednakże nie przestają wstrząsać opisy Baku, w którym Azerowie oraz Turcy mordowali Ormian: „Niewesoły widok przedstawiały znane ulice – pisze Żeromski. - Bez żadnej przesady i bez przenośni mówiąc, krew płynęła nie rowami, lecz lała się po powierzchni jako rzeka wieloramienna. Ściekała do morza i zafarbowała czyste fale. Trupy wyrżniętych Ormian wrzucano w morze, podwożąc je na brzeg samochodami ciężarowymi i wozami. Ryby z dalekich okręgów kaspijskich nadpłynęły ławicą szeroką, zwiedziawszy się o nieprzebranej wyżerce. Lecz nie mogły wszystkiego pochłonąć i strawić. A morze nie chciało przyjąć i przechowywać ofiary ludzkiej. Odrzucało ją suszy skrwawionej pracą nieustanną swej czystej fali. Zaszła tedy potrzeba zakopywania trupów tej suszy dla uniknięcia zarazy, wobec szybkości rozkładu przy południowym gorącu".

Drugą powieścią z wątkiem dotyczącym ludobójstwa Ormian jest „Choucas" Zofii Nałkowskiej, drukowana w 1926 r. w „Tygodniku Ilustrowanym", a rok później wydana w postaci książki. Jej podtytuł – Powieść internacjonalna – odsłania intencje pisarki. Postuluje ona integrację narodów, które choć niedawno walczyły ze sobą, obecnie powinny dążyć do zgodnego współżycia. W powieści przedstawiciele tych narodów spotkali się w szwajcarskim sanatorium. Są wśród nich Ormianie, którzy wprawdzie umknęli rzeziom w Turcji, ale je widzieli i zawsze będą pamiętać.

Panna Hovsephian tak opowiada o unicestwianiu swoich rodaków: „Turcy mordowali ich w mieszkaniach, na ulicach, po więzieniach. Małych chłopców spędzali na rynki miast i zarzynali siekierami i nożami, a za kordonem policji wyły z męki i szalały ich matki. Całe miasta armeńskie, całe wojska widm, całe zastępy mających umrzeć gnano przez bagna i pustynie szlakami, wzdłuż których gniły trupy tych, którzy poszli dawniej. Idąc, umierali z głodu i zarazy – mężczyźni, kobiety i małe dzieci. Zatrzymywali się na odpoczynki na cmentarzach, w truciźnie zaledwie przysypanych ziemią ciał. I znowu szli dalej, a w trawie między grobami zostawali umierający na tyfus i cholerę (...). W pobliżu miast nawet widziało się często po ziemi to jakąś rękę, to ogryzione kości, to kawałki gnijącego mięsa ludzkiego, z płytkich, zbiorowych grobów wywleczone przez psy. Wody Eufratu były zatrute, cuchnęły od trupów.

Natomiast pan Peynirian pochodził z Konstantynopola, gdzie mieściły się ambasady mocarstw zachodnich, gdzie mieszkali zagraniczni biznesmeni i dlatego Turcy łagodniej traktowali tamtejszych Ormian. Lecz musiał on opuścić miasto, pozostawiając matkę i spory majątek. Resztki dawnej fortuny pozwalały mu na skromne życie. „I czekał tutaj – na co? Nie wiadomo. Na nowe przemiany polityczne, na obudzenie się międzynarodowego sumienia, na cud. Bo wszystkie obietnice Ameryki i Europy zawiodły".

Najmłodsza spośród Ormian w powieści Nałkowskiej, Sossé Papazian „dużo także zapewne przeżyła - i coś z tego zapamiętała zbyt dobrze, coś straszliwego. հազիվ հողով ծածկված մարմինների կողքին: Եվ կրկին շարունակում էին քայլել՝ թողնելով տիֆից ու խոլերայից մահացածներին գերեզմանների արանքներում (...): Քաղաքների մերձակայքում հաճախ կարելի էր տեսնել շների կողմից զանգվածային գերեզմաններից դուրս բերված՝ գետնի վրա ընկած ձեռքեր, կրծված ոսկորներ կամ փտած մարդկային մսի կտորներ: Եփրատ գետի ջրերն աղտոտվել էին, և դրանցից տարածվում էր դիակների սարսափելի հոտ»:

Պարոն Փեյնիրեանը Կոստանդնուպոլսից էր՝ մի քաղաքից, որտեղ տեղակայված էին արևմտյան տերությունների դեսպանատները և բնակվում էին արտասահմանցի գործարարներ, ինչի շնորհիվ թուրքերն այնտեղի հայերի նկատմամբ վարում էին ավելի մեղմ քաղաքականություն: Սակայն նա ստիպված էր լքել քաղաքը՝ թողնելով մորը և իր մեծ ունեցվածքը: Նախկին հարստության մնացորդները հնարավորություն էին տալիս նրան ապրել համեստ կյանքով: «Եվ նա այստեղ սպասում էր, բայց ինչի՞ համար՝ անհայտ էր: Նոր քաղաքական փոփոխությունների՞, միջազգային խղճի վերածննդի՞, թե՞ հրաշքի: Քանզի Ամերիկայի և Եվրոպայի բոլոր խոստումները ձախողվել էին»:

Նալկովսկայի վեպի ամենափոքրիկ հերոսը՝ Սոսե Փափազյանը, ամենայն հավանականությամբ շատ բան էր տեսել ու ապրել, իսկ որոշ հիշողություններ խորապես մնացել էին նրա մտքում, այդ թվում՝ մի սարսափելի հուշ: Հայտնի է, որ ուժեղ տենդի ու դելիրիումի ժամանակ նա ունեցել է ահավոր տեսիլք, որը հայտնի էր միայն իրեն և լցրել էր վախով ու հուսահատությամբ:

«Choucas» վեպում հայերի ջարդերի մասին խոսվում է ավելի մանրամասն ու տարածված, քան Ժերոմսկու նույն թեմայով ստեղծագործությունում, ինչպես նաև ներկայացվում է հայ ժողովրդի ամբողջ պատմությունը: Այս միջազգային վեպը լայն հնարավորություններ ընձեռեց հայերի թեման խորությամբ ներկայացնելու համար, և Նալկովսկան վարպետորեն օգտվեց այդ հնարավորություններից: Նա արժանի է գովասանքի՝ ոչ միայն հայ ժողովրդի վերաբերյալ ունեցած խոր գիտելիքների, այլև դրանք գեղարվեստական վարպետությամբ փոխանցելու համար:

1934 թվականին Վլադիսլավ Յան Գրաբսկու «Եղբայրներ» վեպում կա կարճ հատված, որտեղ հիշատակվում են հայերը: Վեպի հերոսը՝ Փարիզ այցելելիս, հանդիպում է մի հայի, ով նրան առանձնապես դուր չի գալիս: «Հուգոնը թարս նայեց հային՝ արտահայտիչ քթով, նիհար, սևահեր տղամարդուն: Ինչ մռայլ կերպար: Պատմության մեծ հարցական: Թուրքիան բողոքում է, թե հայերն են իրենց ճնշում, խորամանկությամբ սպանում, իսկ հայերը բարձրաձայնում են թուրքական դաժանությունների և կազմակերպված ջարդերի մասին: Ո՞ւմ հավատալ, երբ երկու կողմերն էլ այդքան համոզված ներկայացնում են իրենց ճշմարտությունը»: Վեպի հեղինակը չի խորացել խնդրի էության մեջ և, գուցե հենց այդ պատճառով, այն ներկայացրել է պարզեցված ձևով:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիայում հայերի ցեղասպանությանը առավել անդրադարձած գրողը Բոգդան Գեմբարսկին էր: 1961 թվականին նա հրապարակեց «Նամակ հին թուրք ծանոթին» ստեղծագործությունը «Կերունկի» (թարգ.՝ «Ուղղություններ») շաբաթաթերթում: Չնայած այն ամբողջությամբ գեղարվեստական ստեղծագործություն չի համարվում, այնուամենայնիվ ունի գեղարվեստական գրականության որոշ բնորոշ տարրեր: Ամեն դեպքում, սա լեհական

Wiadomo było, że przy silnej gorączce, w deliriach, oglądała jakąś jedną, sobie wiadomą, potworną wizję, która napełniała ją przerażeniem i rozpaczą".

W „Choucas" jest o wiele więcej o ludobójstwie Ormian niż w powieści Żeromskiego, a nadto o całej historii narodu ormiańskiego. Owa Powieść internacjonalna stwarzała lepsze możliwości pisania na temat Ormian i Nałkowska to wykorzystała. Pochwalić ją należy za przyswojenie sporej wiedzy o tej nacji, a zwłaszcza za umiejętność przedstawienia jej w utworze fabularnym.

Krótki passus dotyczący Ormian znaleźć można w powieści Władysława Jana Grabskiego „Bracia" z 1934 r. Jej bohater, podczas wizyty w Paryżu, natknął się na jednego Ormianina, który niezbyt mu się spodobał: „Hugon z ukosa spojrzał na Armeńczyka, chudego bruneta o semickim nosie. Cóż za mętna postać! Znak zapytania historii! Turcy skarżą się że ich Armeńczycy gnębią, lichwą duszą, podstępnie mordują, a Armeńczycy krzyczą o okrucieństwach Turków i organizowanych pogromach. Komu tu wierzyć, jeśli obie strony z taką wiarą opowiadają swoje racje". – Autor powieści nie wysilił się, aby posiąść rzetelną wiedzę i może dlatego zrelatywizował problem.

Po drugiej wojnie światowej pisarzem, który zajmował się szczególnie ludobójstwem Ormian w Turcji był Bohdan Gębarski. W 1961 r. w tygodniku „Kierunki" opublikował „List do starego tureckiego znajomego". Trudno uznać go za utwór beletrystyczny, choć ma pewne elementy charakterystyczne dla beletrystyki. W każdym razie jest to najbardziej znany utwór w literaturze polskiej, poświęcony Ormianobójstwu. Szybko zdobył on sobie czytelników w Armenii, gdzie przetłumaczyła go na ormiański Maria Grocholska, Polka zamieszkała w Erywaniu, entuzjastka wszystkiego co ormiańskie. Potem czytano go też w diasporze.

Nadawca „Listu...", pełniący jakby funkcję narratora, zwraca się do poznanego przed wojną Turka z pytaniami o dokonane w jego kraju ludobójstwo. Przypomina mu, że pytał go o to przed laty, ale on nie umiał odpowiedzieć, bo, jak twierdził, był w czasie wojny dzieckiem. Lecz, jak zauważył autor „Listu...", te pytania go zirytowały. Może dlatego przez całe ćwierćwiecze nie utrzymywał z nim kontaktu. Niespodziewanie, po tak długim czasie przysłał do niego list, w którym wyraził radość z powodu sprawiedliwości zaistniałej we współczesnym świecie, na co przykładem jest proces Eichmana czy dekolonizacja. Adresat odpowiedział mu listem otwartym – „Listem do starego tureckiego znajomego" – w którym ponownie poruszył kwestię Ormian zabitych przez Turków.

Przede wszystkim dziwi się, że Turcy nie ustosunkowują się do swej zbrodni i próbują wmówić światu, że jej nie było: „Nie mogę zrozumieć Waszej dotychczasowej obojętności wobec zbrodni, która ciąży na Was od czterdziestu paru lat. Nie rozumiem, jak może w tych warunkach żyć naród, kochać swą ojczyznę, śmiać się i cieszyć, pisać i czytać humorystyczne książki, odwiedzać zagranicę i gościć cudzoziemców. Sądzę, że tak właśnie wyglądałoby niemieckie społeczeństwo, gdyby Hitler zwyciężył w drugiej wojnie światowej. Ale wówczas cały świat byłby obłąkany".

Gębarski napisał także krótką powieść pt. „Morituri". Opowieść o 1915 r., opowiadającą o tym, co w tymże roku stało się w Turcji. Jest więc ona, jak dotąd, jedynym w literaturze polskiej utworem większych rozmiaգրականության մեջ Հայոց ցեղասպանությանը նվիրված ամենահայտնի գործերից մեկն է: Գործը շատ արագ լայն ընթերցողական ընդունելություն գտավ Հայաստանում: Թարգմանությունը կատարել է Մարիա Գրոխոլսկան՝ Երևանում բնակվող լեհուհի, ով մեծ հետաքրքրություն ու սեր էր տածում հայկական մշակույթի նկատմամբ: Ավելի ուշ գործը տարածվեց նաև սփյուռքում: Նամակ ուղարկողը, որը կատարում է պատմողի դեր, դիմում է պատերազմից առաջ ծանոթ թուրքին՝ հարցեր ուղղելով նրա երկրում կատարված ցեղասպանության մասին: Նշում է, որ տարիներ առաջ էլ էր հարցրել նրան, սակայն նա չի կարողացել պատասխանել՝ հավաստիացնելով, որ պատերազմի ժամանակ փոքր երեխա էր: Սակայն, ինչպես նշում է նամակի հեղինակը, այդ հարցերը նրան նյարդայնացրել էին: Գուցե հենց դրա պատճառով էլ նրանք քառորդ դար կապ չեն պահել: Անսպասելիորեն, այդ երկար դադարից հետո նա նամակ է ուղարկել, որտեղ արտահայտել է ուրախություն արդարության վերականգնման կապակցությամբ՝ օրինակ բերելով Այխմանի դատավարությունը և դեկոլոնիզացիան: Նամակի հասցեատերը պատասխանել է բաց նամակով՝ «Նամակ հին թուրք ընկերոջը» վերնագրով, որտեղ կրկին բարձրացրել է թուրքերի կողմից սպանված հայերի թեման:

Նախ՝ զարմանքով նշում է, որ թուրքերն իրենց հանցանքի առիթով չեն արձագանքում և փորձում են աշխարհին համոզել, թե այն երբևէ չի եղել:

«Չեմ կարող հասկանալ ձեր հանցանքի հանդեպ մինչ այժմ ցուցաբերված անտարբերությունը, որը քսան տարուց ավելի ծանրանում է ձեր վրա: Չեմ հասկանում, թե ինչպես կարող է այս պայմաններում մի ժողովուրդ ապրել, սիրել իր հայրենիքը, ծիծաղել ու ուրախանալ, գրել և կարդալ հումորային գրքեր, այցելել արտասահման և ընդունել օտարերկրացիներին: Կարծում եմ՝ հենց այսպիսին կլիներ գերմանական հասարակությունը, եթե Հիտլերը հաղթած լիներ երկրորդ համաշխարհային պատերազմում: Բայց այդ դեպքում ողջ աշխարհը խելագարված կլիներ»:

Գեմբարսկին գրել է նաև կարճ վեպ՝ «Մորիտուրի» խորագրով, որը պատմում է 1915 թվականին Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Այս գիրքը մինչ այժմ լեհական գրականության մեջ միակ մեծածավալ ստեղծագործությունն է այս թեմային նվիրված: Այն չի հրատարակվել հեղինակի կենդանության օրոք (նա մահացել է 1978 թվականին): Գեմբարսկին հիմնականում զբաղվել է հրապարակախոսությամբ, հաջողությամբ տիրապետել է նաև գեղարվեստական արձակին: «Մորիտուրի»-ն հրատարակվել է միայն 1992 թվականին՝ «Հայ մշակույթի հետաքրքրությունների ընկերության» հրատարակչական շարքում: Գիրքը լույս է տեսել նաև Հայաստանում՝ Անահիտ Տեր-Ղազարյանի թարգմանությամբ:

«Մորիտուրի»-ի գործողությունները զարգանում են Առաջին համաշխարհային պատերազմի առաջին ամիսներին: Դրամայի հերոսները թուրքական բանակի սպայական կազմի ներկայացուցիչներ են, որոնց մեջ կան նաև հայեր: Խիզախ, ընկերասեր և ծառայակիցների կողմից սիրված այդ սպաները հանկարծ սկսում են աստիճանաբար մեկուսացվել մնացածներից: Նրանք դեռ չեն գիտակցում, որ այդ մեկուսացումն իրենց հետագա գաղտնի վերացման նախապատրաստությունն է: Այնինչ ընթերցողն արդեն կանխազգում է այդ ողբերգական ավարտը:

Մարդկության դեմ կատարված այդ ոճրագործությա-

rów, całkowicie temu poświęconym. Lecz nie został on wydany za życia autora (zmarł on w 1978 r.). A przecież Gębarski, mimo że uprawiał głównie publicystykę, nieźle poradził sobie z prozą artystyczną. „Morituri" wydało dopiero w 1992 r. Koło Zainteresowań Kulturą Ormian w swojej serii wydawniczej. Ukazało się ono też w Armenii w tłumaczeniu Anahit Ter-Ghazarian.

Akcja „Morituri" dzieje się w początkowych miesiącach pierwszej wojny światowej, jej bohaterami są zaś oficerowie armii tureckiej, pośród których nie brak Ormian. Waleczni, lubiani przez kolegów, nagle zaczynają być stopniowo oddzielani od pozostałych oficerów. Nie wiedzą, że ma to na celu ich późniejsze, skrytobójcze uśmiercenie. Aczkolwiek wiedzą o tym czytelnicy.

Inna powieść, w której jest o tym ludobójstwie to Józefa Łobodowskiego „W stanicy", drugi tom jego cyklu powieściowego, nazywanego zwykle „trylogią ukraińską". Jej bohater, Staś Majewski, jak Cezary Baryka z „Przedwiośnia" chciał wyjechać z objętej rewolucją Rosji. Ale zanim ją opuścił, przeżył różne przygody, poznał mnóstwo ludzi. Znajomy Kozak, Czubar, opowiada mu jak w czasie niedawnej wojny stacjonował pośród gór rozciągających się za Erywaniem, w Igdir. Żyła tam grupa Ormian, która ukryła się w górach, dzięki czemu jej nie wymordowano. Żołnierze rosyjscy zapewniali im bezpieczeństwo, a poza tym dawali jedzenie w zamian za posługi. Powieść ta, wydana w Londynie w 1958 r., dopiero niedawno została wydana w kraju.

Z kolei w Paryżu w 1977 r. wyszedł utwór Wiktora Woroszylskiego pt. „Literatura. Powieść". Są to jakby luźne zapiski, układające się jednak w spójną całość. Autor pisze także o genezie swego wiersza „Oczy Metakse". Otóż podczas wizyty w Erywaniu w 1954 r., oglądał taniec jednej dziewczyny, której ruchy wydały mu się naznaczone traumą, którą prawdopodobnie przeżyli jej dziadkowie i którą z kolei przekazali jej rodzice.

Woroszylski daje też bez komentarza cytat z protokołu z zebrania kierownictwa młodotureckiej partii Ittihad. Jest w nim wypowiedź dr Mehmeda Nazyma, jednego z przywódców tej partii, o konieczności wytępienia wszystkich Ormian. Inni z nim się w pełni zgadzają

Jeszcze jeden niewielki fragment o Ormianobójstwie znaleźć można w pierwszym tomie „Sagi kresowej" Stanisława Srokowskiego z 2011 r. Autor wprowadził tu epizodyczną choć znaczącą postać Anahit Karenian. Jest to koleżanka głównej bohaterki z lwowskiego gimnazjum, wywodząca się spośród stosunkowo nielicznych Ormian, którzy przeżyli ludobójstwo. Autor wyraża głębokie współczucie wobec ofiar tej zbrodni. A poza tym w jakimś sensie łączy ich z ofiarami drugiej wojny światowej, opi-sanymi w dalszych partiach książki.

Niewykluczone, że dałoby się znaleźć jeszcze inne polskie utwory beletrystyczne, w których jest jakaś, choćby drobna wzmianka dotycząca dwudziestowiecznej tragedii narodu ormiańskiego. Literatura polska jest bowiem przebogata, nikt nie zna wszystkich dokonań jej twórców. Choć w całości poświęcony Ormianobójstwu jest tylko „Morituri" Gębarskiego. Wśród Polaków wzrasta jednak wciąż świadomość jego wyjątkowości, w takim razie można się więc spodziewać, iż w niedalekiej przyszłości ktoś napisze o niej wielką powieść.

նը նվիրված մեկ այլ ստեղծագործություն է Յուզեֆ Լոբոդովսկու «Ստանիցայում» (W stanicy/Կայարանում) վեպը, որը նրա վիպաշարի երկրորդ հատորն է և հայտնի է որպես ուկրաինական եռերգության մաս: Վեպի հերոսը՝ Ստաս Մայևսկին, ինչպես Ստեֆան Ժերոմսկու «Գարնան նախերգանքում» (Przedwio[nie), ցանկանում էր հեռանալ հեղափոխությամբ տարված Ռուսաստանից: Սակայն մինչ այդ բազմաթիվ արկածներ է վերապրում և ծանոթանում տարբեր մարդկանց հետ: Նրանց թվում է նաև Կուբարը՝ ծանոթ կազակը, որը պատմում է, թե ինչպես վերջին պատերազմի ժամանակ Երևանից այն կողմ՝ Իգդիրի լեռներում, ապրել է հայերի մի խումբ, որը թաքնվել էր այնտեղ և այդպես փրկվել: Ռուս զինվորները ապահովում էին նրանց անվտանգությունը և սնունդ էին տրամադրում՝ որպես փոխհատուցում ստանալով այլ ծառայություններ: Վեպը, որը առաջին անգամ լույս է տեսել Լոնդոնում 1958 թվականին, հայրենիքում հրատարակվել է միայն վերջերս:

Փարիզում 1977 թվականին լույս է տեսել Վիկտոր Վոռոշիլսկու «Գրականություն: Վեպ» ստեղծագործությունը: Այն կարծես ազատ գրառումների շարք է, որը սակայն կազմում է միասնական և ներդաշնակ ամբողջություն: Հեղինակը պատմում է նաև իր՝ «Մետաքսյայի աչքերը» բանաստեղծության ստեղծման պատմությունը: 1954 թվականին Երևան կատարած իր այցելության ժամանակ նա տեսել է մի աղջկա պար, որի շարժուններն իրեն տրավմայի ենթարկվածի տարրեր են պարունակում՝ տրավմա, որը, հավանաբար, անցել էր նրա տատիկի և պապիկի միջով, և որը ծնողներն իրենց հերթին փոխանցել էին իրեն:

Վոռոշիլսկին առանց մեկնաբանության մեջբերում է ներկայացնում երիտթուրքական «Իթթիհադ» կուսակցության ղեկավար կազմի նիստի արձանագրությունից: Այդ մեջբերման մեջ դոկտոր Մեհմեդ Նազիմը, կուսակցության առաջնորդներից մեկը, արտահայտում է հայերի ամբողջական վերացման անհրաժեշտության մասին: Նիստի մյուս մասնակիցները լիովին համակարծիք են նրա հետ:

Հայոց ցեղասպանությանը նվիրված կարճ, բայց կարևոր հատված կարելի է գտնել Ստանիսլավ Սրոկովսկու «Սահմանային սագա» երկհատորյակի առաջին հատորում, որը հրատարակվել է 2011 թվականին: Հեղինակը ներկայացնում է դրվագային, բայց նշանակալի կերպար՝ Անահիտ Կարենյանին, ով գլխավոր հերոսուհու՝ Լվովի գիմնազիայի աշակերտի դասընկերուհին է և պատկանում է ցեղասպանությունից փրկված փոքրաթիվ հայերի շարքին: Սրոկովսկին խորին կարեկցանք է հայտնում այդ հանցագործության զոհերին և որոշ չափով նրանց կապում է Երկրորդ համաշխարհային պատերազմի զոհերի հետ, որոնց մասին պատմվում է գրքի հետագա բաժիններում:

Հնարավոր է, որ գտնվեն նաև այլ լեհական գեղարվեստական ստեղծագործություններ, որտեղ առկա լինի, թեկուզ և փոքրիկ հիշատակում 20-րդ դարի հայ ժողովրդի ողբերգության մասին: Լեհական գրականությունը հարուստ ու բազմազան է, և ոչ ոք չի կարող իմանալ դրանում եղած բոլոր ստեղծագործությունները: Թեև Հայոց ցեղասպանությանը ամբողջությամբ նվիրված է միայն Գեմբարսկու «Morituri»-ն, սակայն լեհերի շրջանում շարունակաբար աճում է այդ ողբերգության բացառիկության գիտակցումը: Ուստի կարելի է ակնկալել, որ մոտ ապագայում ինչ-որ մեկը այդ մասին մեծածավալ վեպ կգրի:

Wydawca: Հայ-լեհական հասարակական կոմիտե
Ormiańsko-Polski Komitet Społeczny

Numer zamknięto 31.05.2025r.

Adres Redakcji: Wolności 311, II piętro, 41-800 Zabrze
e-mail: sekretariat.ormianie@gmail.com

Druk: Drukarnia Advert, ul. Krakowska 21-23, 41-503 Chorzów
Nakład 1000 egz., ilość stron 36.

Rada Redakcyjna:
Hraczja Bojadżjan (przewodniczący)
prof. Grzegorz Paweł Pełczyński
prof. Krzysztof Stopka
dr hab. Krzysztof Fedorowicz
dr hab. Renata Król-Mazur
dr hab. Adam Pomieciński
dr hab. Andrzej A. Zięba
dr Andrzej Gliński (Instytut Piramowicza)
dr Tomasz Krzyżowski (Ormiańskie Towarzystwo Kulturalne w Krakowie)
dr Dominika Maria Macios
dr Marek Miławicki OP
dr Witold Repetowicz
dr Jerzy Szokalski
Arusia Baghinyan
Narine Baghdasaryan
Narek Baghdasaryan
Diana Howakimjan (Komisarz ds. Diaspory RA w Polsce)
Edyta Obrębska
Piotr Oczkowski
ks. Atanas Sarkisjan
Krzysztof Mojzesowicz (Towarzystwo Ormian Polskich)

Czasopismo powstaje we współpracy z:

Ministerstwo Spraw Wewnętrznych I Administracji

Dofinansowano ze środków Ministra Spraw Wewnętrznych i Administracji

Ministerstwo Kultury i Dziedzictwa Narodowego

Dofinansowano ze środków Ministra Kultury i Dziedzictwa Narodowego pochodzących z Funduszu Promocji Kultury

Instytutem Starożytnych Rękopisów im. Mesropa Masztoca – Matenadaran w Erywaniu

Biblioteką Narodową Republiki Armenii

Materiałów zamieszczonych w czasopiśmie mniejszości ormiańskiej MUNETIK nie można w żadnej formie reprodukować bez pisemnej zgody Wydawcy.

ՄՈՒՆԵՏԻԿ հանդեսում տպագրված նյութերը որևէ եղանակով չեն կարող վերատպվել առանց Հրատարակչի գրավոր համաձայնության:

Publikacja wyraża jedynie poglądy autorów i nie może być utożsamiana z oficjalnym stanowiskiem Ministra Spraw Wewnętrznych i Administracji.

Հրապարակումը արտահայտում է միայն հեղինակների տեսակետները և չի կարող նույնացվել Ներքին գործերի և վարչարարության նախարարության պաշտոնական դիրքորոշման հետ:

Ormiańsko-Polski Komitet Społeczny
Santander Bank Polska
PL 91 1090 1766 0000 0001 4874 0165

Podczas koncertu utwory znanych kompozytorów ormiańskich i polskich wykonali Chór "Resonans con tutti", Śląska Orkiestra Kameralna pod dyrekcją kompozytora Grigora Arakelyana oraz Piotr Oczkowski.

Համերգի ընթացքում հայտնի հայ և լեհ կոմպոզիտորների ստեղծագործությունները կատարել են «Resonans con tutti» երգչախումբը, Սիլեզիական կամերային նվագախումբը՝ կոմպոզիտոր Գրիգոր Առաքելյանի դիրիժորությամբ, ինչպես նաև Պյոտր Օչկովսկին:

W DNIU 23 KWIETNIA 2025 ROKU W KOŚCIELE ŚWIĘTEJ TRÓJCY W WARSZAWIE ODBYŁ SIĘ IV FESTIWAL KULTURY ORMIAŃSKIEJ, ZORGANIZOWANY W RAMACH OBCHODÓW 110. ROCZNICY LUDOBÓJSTWA ORMIAN ORAZ 20. ROCZNICY UCHWAŁY SEJMU RZECZYPOSPOLITEJ POLSKIEJ POTĘPIAJĄCEJ TO LUDOBÓJSTWO.

ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ, 2025 Թ., ՎԱՐՇԱՎԱՅԻ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԸ, ՈՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԷՐ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 110-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԵՎ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՍԵՅՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԴ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ:

Festiwal Kultury Ormiańskiej
Հայկական Մշակույթի Փառատոն

Հայ-լեհական հասարակական կոմիտե
Ormiańsko-Polski Komitet Społeczny